# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

39ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 41 (1941) ՇԱԲԱԹ, ՆՈՅԵՄԲԵՐ 9, 2019
VOLUME 39, NO. 41 (1941) SATURDAY NOVEMBER 9, 2019

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

### Ձարեհ Սինանեանի Զարմանալի Լռութիւնը

Փասատինայի Վաչէ եւ Թամար Մանուկեան երկրորդական վարժարանը փակելու որոշումը կը շարունակէ մնալ Լոս Անճելըսի հայութիւնը յուզող գլխաւոր հարցը: Դպրոցի ուսանողներն ու ծնողները կը շարունակեն հանդէս գալ բողոքի ցոյցերով, որոնցմէ վերջինը տեղի ունեցաւ անցեալ Կիրակի որ, Պըրպէնքի Առաջնորդարանի շրջափակէն ներս: Կրթական այս կարեւոր հաստատութեան փակումի որոշումին դէմ կ՚արտայայտուին տարբեր շրջանակներ եւ մամուլի օրկաններ: Երիտասարդութիւնը իր կարծիքները կը ներկայացնէ Դիմատետրի (Facebook) եւ համացանցի ընկերային այլ կայքերուն միջոցաւ:

Այս բոլորին մէջ զարմանալիօրէն լուռ է Սփիւռքի գործերու գլխաւոր յանձնակատար Ձարեհ Սինանեանը, որ ցարդ ոչ մէկ արտայայտութիւն ունեցած է սփիւռքեան կարեւոր կրթական հաստատութեան մը փակումին կապակցութեամբ:

Սփիւռքի յանձնակատարը երբեք առիթ չի կորսնցներ երեւնալու մամուլին առջեւ ու ցոյց տալու իր ըրածն ու չրածը, ինչպէս որ տեսանք թրքական զօրքերու Հիւսիսային Սուրիոյ տարածքը ներխուժման օրերուն: Այդ շրջաններուն մէջ ապրող հայութեան վիճակով մօտէն զբաղուողները Արտաքին Գործոց նախարարութիւնն ու Ազգային Անվտանգութեան Խորհուրդն էին, որոնց կողմէ հրապարակուած հաղորդագրութիւնները կրկնելով Պր. Սինանեան կը փորձէր ցոյց տալ թէ, ինք եւս դերակատարութիւն ունի այդտեղ: Միւս կողմէ, կարեւոր հարց մը, որ յանձնակատարի գործունէութեան անմիջական ծիրէն ներս կը գտնուի, կ՚արժանանայ լրիւ անտեսումի:

Ձարեհ Սինանեան արդէն իսկ բոլորեց իր պաշտօնավարման առաջին վեց ամիսները ու տակաւին շօշափելի արդիւնքներու կը սպասեն Հայաստանն ու սփիւռքը: Կրնայ ըսուիլ որ, այդ ժամանակաշրջանը շատ կարճ է նորաստեղծ կառոյցին համար: Սակայն, առաջին նախանշանները այդքան ալ յուսադրող չեն, որ Յանձնակատարի գրասենեակը պիտի կարողանայ յառաջընթաց արձանագրել Հայաստան-Սփիւռք կապերուն նոր որակ հաղորդելու առումով, ինչ որ խոստացուած էր Սփիւռքի Նախարարութիւնը Սփիւռքի գործերու յանձնակատարով փոխարինելու որոշումը արդարացնելու համար:

Տակաւին ուշ չէ, որպէսզի Սինանեան հանդէս գայ հրապարակային յայտարարութեամբ մը, իր խօսքը ըսելու համար՝ կարեւոր գաղթօճախի մը մէջ Հայ դպրոցին սպասող ճակատագրի մասին ու զօրակցութիւն յայտնելու իրենց ապագայով մտահոգ Հայ ուսանողներուն ու անոնց ծնողներուն:

«ՄԱՍԻՍ»

## Փաշինեան. ՀԱՊԿ-ը Կայունութեան եւ Անվտանգութեան Գլխաւոր Գործօնն է Մեր Տարածաշրջանին Մէջ




Նիկոլ Փաշինեան ՀԱՊԿ անդամ պետութիւններու խորհրդարաններու ղեկավարներու հետ հանդիպման ընթացքին

*Հաւաքական Անվտանգութեան Պայմանագրի Կազմակերպութիւնը (ՀԱՊԿ) Հայաստանի համար ռազմավարական նշանակութիւն ունի: Այս մասին Երեւանի մէջ ՀԱՊԿ անդամ պետութիւններու խորհրդարաններու ղեկավարներու հետ հանդիպման ընթացքին ըսած ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան:*

*«Մենք կարծում ենք, որ ՀԱՊԿ-ը կայունութեան եւ անվտանգութեան գլխաւոր գործօնն է մեր տարածաշրջանում, մենք մեծ կարեւորութիւն ենք տալիս ՀԱՊԿ-ի շրջանակներում մեր համագործակցութեան բոլոր երեք ուղղութիւններին: Առաջին հերթին դա արտաքին քաղաքական համակարգումն է, ռազմատեխնիկական համագործակցութիւնը եւ, իհարկէ, անվտանգութեան ոլորտում մեր ընդհանուր մօտեցումը ընդհանուր սպառնալիքներին: Իհարկէ, ցաւօք, սպառնալիքները նոյնպէս փոխւում են, եւ մենք պէտք է ադեկվատ արձագանքենք դրանց: Իհարկէ, մեր կազմակերպութիւնը պէտք է համապատասխանի տարա-*

Շար.ը էջ 5

## ՍԴՀԿ ԿՎ Յայտարարութիւնը ԱՄՆ Կոնգրեսի 296 Բանաձեւի Ընդունման Կապակցութեամբ

Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական Վարչութիւնը կ՚ողջունէ ԱՄՆ ներկայացուցիչներու տան՝ Հայոց Ցեղասպանութեան ճանաչումը ամրագրող թիւ 296 բանաձեւի ընդունումը և իր երախտագիտութիւնը կը յայտնէ բոլոր այն ներկայացուցիչներուն, որոնք քուէարկեցին անոր ի նպաստ:



Պատմական այս բանաձեւը ոչ միայն կը հաստատէ Հայոց Ցեղասպանութեան փաստը, այլ ամբողջովին կը մերժէ Ցեղասպանութեան ժխտման որեւէ երեւոյթ կամ դրսեւորում: Ան կը մղէ ԱՄՆ վարչակարգը որդեգրելու քաղաքականութիւն? Ցեղասպանութեան պաշտօնական ճանաչման, ոգեկոչման և իրազեկման վերաբերեալ:

Բանաձեւի ընդունումը անտարակոյս արդիւնք է, մէկ կողմէն աշխարհաքաղաքական նոր իրողութիւններու և միւս կողմէն ամերիկահայ գաղութի քաղաքական կազմակերպուածութեան և տասնամեակներու վրայ երկարող աննահանջ աշխատանքին? դաշնակցային և նահանգային մակարդակներու վրայ:

Լիայոյս ենք, որ ԱՄՆ Ներկայացուցիչներու տան այս վճռական քայլը ազդակ կը հանդիսանայ ԱՄՆ Ծերակոյտին, որ այնտեղ ևս որդեգրուի այս բանաձեւը և հասցնելով ԱՄՆ նախագահի ստորագրութեան:

Այդպիսով, Ցեղասպանութեան ճանաչման հարցը վերջնականապէս դուրս կու գայ քաղաքական օրակարգէն և վերջապէս կը կարողանանք անցում կատարել մեր պահանջատիրութեան յաջորդ հանգրուանի? հատուցման ու վերականգնման կարեւորագոյն աշխատանքներուն:

**Ս.Դ.Հ.Կ. Կեդրոնական Վարչութիւն**
**Հոկտեմբեր 29, 2019**

## Մեկնարկած է «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Ազգային Նուիրատուութեան 22-Րդ Հեռուստամարաթոնը




*Նոյեմբեր 28-ին, «Հայաստան» համահայկական հիմնադրամը պիտի իրականացնէ ազգային նուիրատուութեան 22-րդ հեռուստամարաթոնը՝ «Ես իմ անուշ Հայաստանի. կենարար ջուր եւ արեւ համայնքներուն» խորագրի տակ, որ ուղիղ հեռարձակումով պիտի սկսի Հայաստանի հանրային հեռուստաընկերութեամբ՝ ժամը 22:00-ին:*

*12-ժամեայ համահայկական ձեռնարկին առաջին 4 ժամը այս տարի պիտի իրականացուի Երեւանի մէջ, իսկ յաջորդ 8 ժամը պիտի հեռարձակուի Լոս Անճելըսէն:*

*«Հեռուստամարաթոն-2019»-ի ընթացքին հաւաքուած միջոցները պիտի նպատակաուղղուին խմելու ջուրի մատակարարման եւ արեւային ուժի կիրառման ծրագրերու իրականացման Արցախի, ինչպէս նաեւ Հայաստանի երեք մարզերու մէջ՝ Տաւուշ, Լոռի եւ Շիրակ: Ընդհանուր առմամբ հարիւրէն աւելի համայնքներ պիտի դառնան ծրագրերու շահառուներ եւ պիտի ապահովուին շուրջօրեայ ջրամատակարարմամբ, անվճար ջեռուցմամբ ու ելեկտրականութեամբ:*

*Կոչ կ՚ընենք համայն հայութեան մասնակցելու համահայկական դրամահաւաքին եւ միասնական ջանքերով զարգացնելու մեր համայնքները:*

*Գործարկուած է առաջատար գիտարուեստով գինուած եւ նորամուծութիւններով լի մեր նոր կայքը նոյն հասցէով, որ Հիմնադրամի աշխատանքները կը դարձնէ լիովին թափանցիկ ու հաշուետու համայն հայութեան, ինչպէս նաեւ հնարաւորութիւն կու տայ առցանց նուիրատուութիւններ կատարելու ձեր նախընտրած ձեւաչափով: Նոր կայքի հնարաւորութիւններուն, ինչպէս նաեւ առցանց նուիրատուութեան մեքենականութիւններուն կրնաք ծանօթանալ՝ այցելելով https://www.himnadram.org/hy/donate:*

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# Խոհանոցային Գրոհ Նախարարի Դէմ

ԱՐԱՄ ԱՄԱՏՈՒՆԻ

*Խոհանոցային որոշ խօսակցութիւններ կուտակւում են ու հասնում վարչապետին՝ լրագրողների հետ զրոյցում ասել է Հայաստանի պաշտպանութեան նախարար Դաւիթ Տօնոյեանը: Նա այդպէս է արձագանքել գեներալիտետի դժգոհութեան մասին հարցերին ի պատասխան: Թեմա, որին նախօրէին ֆէյսբուքեան իր գրոյցում անդրադարձել էր նաեւ վարչապետ Նիկոլ Փաշինեանը, որը խօսել էր բանակն ու գեներալիտետը «Թուլացնելու» մասին, այսպէս ասած, մեղադրանքներին: Նիկոլ Փաշինեանը ներկայացրել էր, որ ոչ մի իշխանութեան շրջանում մէկուկէս տարուայ ընթացքում չի արուել բանակի ու զինուորականութեան համար այնքան բան, որքան յեղափոխութիւնից յետոյ ընկած ժամանակահատուածում: Պաշտպանութեան նախարարն էլ հաստատել է, որ արագացել է ամէն ինչ՝ բանակի սպառազինութեան համալրման տեմպից մինչեւ զինծառայողների կենցաղի բարելաւման գործընթաց: Նախարարը նշել է, որ իհարկէ այնպէս չէ, որ բանակը դոփել է տեղում, սակայն ներկայումս կարճ ժամանակահատուածի մէջ կայ մեծ արագութիւն:*

*Փաստօրէն կան նաեւ «խոհանոցային կուտակումներ»՝ ինչպէս նկատել է պաշտպանութեան նախարարը, փաստացի Թերեւս նկատի ունենալով այն, որ կայ շրջանակ, որը ձգտում է վարչապետ Փաշինեանին հասցնել իբրեւ Թէ դժգոհութեան առկայութեան մասին տեղեկութիւններ: Այլ կերպ ասած՝ Նախարար Տօնոյեանն ակնարկում է, որ ոչ միայն Նախորդ իշխող համակարգի տեղեկատուաքարոզչական աշխատանքի մաս է բովանդակութիւնը, Թէ իբրեւ վարչապետը Թուլացնում է բանակը, ու դա առաջացնում է դժգոհութիւն, այլ նաեւ կան «խոհանոցային» շրջանակներ, որոնք փորձում են ստեղծել այդպիսի դժգոհութեան տպաւորութիւն:*

*Նախարար Դաւիթ Տօնոյեանը, այլ կերպ ասած, ակնարկում է, որ կան շրջանակներ, որոնք վարչապետի մօտ փորձում են հասունացնել պաշտպանութեան նախարարի աշխատանքից դժգոհութիւն: Որովհետեւ, ի վերջոյ, եթէ բանակում կայ դժգոհութիւն վարչապետի աշխատանքից, իսկ վարչապետն էլ ներկայացնում է, Թէ որքան փոփոխութիւն է արւում բանակի հանդէպ ուշադրութեան իմաստով, ապա ստացւում է, որ այդ ջանքերը արդիւնաւէտ չի իրացնում պաշտպանութեան նախարարը: Իսկ եթէ խօսքը «խոհանոցային» ջանքի մասին է, ապա այստեղ յստակ է Թերեւս, որ խօսքը իշխանութեան «խոհանոցի» մասին է, քանի որ նախկին համակարգն իշխանութեան դէմ, իշխանութեան հանդէպ դժգոհութիւն առաջացնելու հարցում, օրինակ, գործում է բաւականին բացայայտ՝ առանց որեւէ խոհանոցային գաղտնիքներ պահելու:*

*Ինչո՞վ է պայմանաւորուած պաշտպանութեան նախարարի դէմ «խոհանոցային» ջանքը՝ հնարաւոր է իհարկէ ենթադրել: Ի վերջոյ պատճառների կամ մոտիւների դիապազոնը կարող է ներառել զուտ ինչ-ինչ անձնական հաւակնութիւնների հանգամանքից մինչեւ քաղաքական խնդիրներ՝ հաշուի առնելով այն, որ շատերին կարող է անհանգստացնել պաշտպանութեան նախարար Տօնոյեանի քաղաքական բարձր վարկանիշը:*

*Իսկ այդտեղ հանգամանքը հետաքրքիր է նրանով, որ իշխանութեան համակարգում պաշտպանութեան նախարարի քաղաքական բարձր վարկանիշը կարող է լինել նոյն այդ համակարգում «քաղաքական մակաբուծութեան» հնարաւոր փորձեր բացառող հանգամանք հենց վարչապետ Փաշինեանի համար: Իսկ, ինչպէս յայտնի է, ցանկացած իշխանութեան պարագայում ժամանակի ընթացքում մշտապէս ձեւաւորւում են այդ իշխանութեան անունով երդուող «քաղաքական մակաբոյծ» խմբեր:*

*«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»*

# Պառակտիչը

ԿԱՐԷՆ ՄԵԼԵԱՆ

*Ո՞րն է այսօր հայաստանեան Թեմաների Թոփ տասնեակի առաջատարը. իմ կարծիքով՝ Արցախի անվտանգութեան խորհրդի նախկին ղեկավար Վիտալի Բալասանեանի քաղաքական գերակտիւութիւնը: «Հերոս», «գեներալ», «Նուիրեալ» ու նման այլ որակումները շրջանցում եմ, քանզի պատմութիւնն ապացուցել է, որ հերոսների եւ հակահերոսների նկարագիրն ու տեղափոխութիւնը երբեմն կախուած են ժամանակից եւ իշխանութիւններից:*

*Եւ այսպէս. ի՞նչ է ասում Վիտալի Բալասանեանը: Բայց նախ արժէ յստակեցնել. եթէ դա ասում է Բալասանեան անձը, վտանգը մեծ չէ, քանի որ առանց հանրային կամ իշխանական աջակցութեան արտայայտուած մտքերը կամ գաղափարները այդպէս էլ կը մնան որպէս անձնական խայթոցներ: Բայց եթէ դրանց հետեւում կայ ուժերի որոշակի շրջանակ, դա լուրջ մտահոգուելու առիթ է: Հետաքրքիր է՝ Բալասանեանը խորամո՞ւխ է եղել Արցախը բացարձակ ինքնիշխան եւ անկախ պետական սուբիեկտ ընկալելու իր դիրքորոշման վտանգների մէջ: Որտեղ, եթէ չասեմ իշխանութիւնները, ինքը կարող է որոշում կայացնել՝ ով գայ Արցախ, ով չգայ, ում է արգելուած եւ ում՝ ոչ: Իսկ գուցէ վաղն էլ իր դիրքորոշումը լիակատար ամրապնդելու համար որոշի գատել Հայաստան-Արցախ սահմանագիծը եւ այնտեղ սահմանապահ զօ՞րք տեղակայել:*

*Այն, որ Հայաստանի եւ Արցախի միջեւ յարաբերութիւնները շատ հարցերում հասնում են աբսուրդի, անվիճելի է, բայց նախկին բարձրաստիճան պաշտօնեայի կողմից նման մօտեցումը չափազանց է: Անկախ, լրիւ անկախ Արցախ՝ ժողովրդավարական արժէքներով, որտեղ մի հոգին նոյնիսկ առանց իշխանութեան իրաւասու է սուբիեկտիւ եւ նեղ անձնական շահ հետապնդող որոշումներ կայացնել, իսկ վա՞ղը, երբ նա գայ իշխանութեան գլուխ, այդ դէպքում ի՞նչ՝ Թագաւորն ապրա՞ծ կենայ:*

*Բալասանեանի խիստ նեգատիւ վերաբերմունքը «Սասնայ ծռերի» նկատմամբ վկայում է հետեւեալի մասին. նոյնականացնելով «ծռերին» եւ ներկայիս իշխանութիւններին, «ծռերին» համարելով նրանց մարտական Թեւը (ինչն ինքնին սխալ է)՝ նշանակում է չընդունել ներկայիս հայաստանեան իշխանութիւններին այնպէս, ինչպէս մերժւում են «ծռերը»: Նախկին՝ սերժական եւ դրան նախորդած քոչարեանական ռեժիմներին բացարձակ աջակցութիւն յայտնել: Ոչ Թէ արգելել ՀՀ-ի միջամտութիւնն Արցախի «ներքին» գործերին, այլ բացայայտօրէն միջամտել ՀՀ պետական գործերին: Եթէ այդպէս չէ, ապա ի՞նչ են նշանակում Բալասանեանի իրար յաջորդող՝ սպառնալից տոնով արուած յայտարարութիւնները. քարոզարշաւի համար մի քիչ շատ ու խիստ չէ՞: Նրա ինչի՞ն են պէտք նման ուշադրութիւնը, համացանցային «քֆրտոցը», իմիջի անկումը՝ նախընտրական փուլում, երբ Արցախում բոլորն իրեն ճանաչում են, ըստ իրեն՝ միայն դրական տեսանկիւնից:*

*Այն, որ Թէ՛ Բալասանեանը, Թէ՛ նրան սատարող շրջանակները վախենում են «ծռերից», դա ինձ համար պարզ է, որքան էլ որ նրանք աշխատում են դա ցոյց չտալ: Պատճառները խորքային են: ՊՊԾ գնդի գրաւումով ի չիք դրուեց Սերժ Սարգսեանի ամենակարողութեան միֆին, եւ հող նախապատրաստուեց իշխանափոխութեան համար: Իսկ որ Բալասանեանի անմիջական մասնակցութեամբ վիժեցուեց յետագայ ըմբոստութիւնը, դա էլ է փաստ: Եւ յետոյ Բալասանեանի մարդկային նկարագիրը խամրեց, երբ նրանից երես Թեքեց իր նախկին գաղափարակից եւ մարտական ընկեր Պաւլիկ Մանուկեանը, ով ժամանակին ամէն ինչ արել էր այդ նոյն Բալասանեանի համար, ընդհուպ ծեծուել՝ պաշտպանելով նրան ու նրա գաղափարները: Եւ որ հիմա Բալասանեանին չեն սատարում նախկինում նրա համախոհներից ոմանք, ապտակ է նրա ինքնասիրութեանը: Հիմա պախարակելով ոմանց՝ նա իր ագրեսիայով ուզում է ձեռք բերել յարգանք, քանզի, իր պատկերացմամբ՝ եթէ վախենում են, ուրեմն յարգում են:*

*Միգուցէ շատերն ինձ հետ չհամաձայնեն, բայց Հայաստանն ու Արցախը տարանջատելու առաջատարը վերջին շրջանում հենց նոյն Բալասանեանն է: Այնպէս որ՝ ինձ համար նա հանդիսանում է տարանջատման քարոզիչ, «հայաստանցի-ղարաբաղցի» եզրոյթների կրող ու ամրապնդող, հին ռեժիմի վերակենդանացմանն ուղղուած պայքարի առաջամարտիկ:*

*«ՀՐԱՊԱՐԱԿ»*

# Թուրք-Ատրպէյճանական Յոխորտանքը.

## Ինչ Թեզեր է Հնչեցնում Անքարան

*Թուրք-ատրպէյճանական տանդեմը դարձեալ յոխորտում է: Թուրքիայի արտգործնախարար Մեւլութ Չաւուշօղլուի՝ Պաքւում օրերս արած յայտարարութիւններից հետեւում է, որ չի կարելի բացառել Անկարայի սադրանքները Հայաստանի նկատմամբ: Թուրք նախարարը, անդրադառնալով հայերին ու Հայաստանին, ըստ ատրպէյճանական լրատուամիջոցների, ձեւակերպել է, Թէ Թուրքիան բռնել է Քրտական աշխատաւորական կուսակցութեանը (ՔԱԿ) յարող հայ «ահաբեկիչների»:*

*Չաւուշօղլուի միտքը Պաքուի հողում աւելի հեռուն էլ է գնացել. յայտարարել է, Թէ աւելի վաղ հայ «ահաբեկիչները» սպանել են Թուրք դիւանագէտներին, հետեւաբար «որտեղ կայ ահաբեկչութիւն, իրենք այնտեղ հայեր են տեսնում»: Անդրադառնալով Ղարաբաղի հակամարտութեանը՝ Թուրքական արտաքին քաղաքականութեան գլխաւոր պատասխանատուն փոքր եղբօրը դարձեալ վստահեցրել է, որ իրենք կ՚անեն հնարաւորը՝ «ատրպէյճանական հողերն ազատագրելու» համար: «Ատրպէյճանի վիշտը մեր վիշտն է, Ատրպէյճանի ուրախութիւնը՝ մեր ուրախութիւնը, Թուրքիան միշտ աջակցել է եղբայրական Ատրպէյճանին»,- ասել է Չաւուշօղլուն՝ ընդգծելով, Թէ նախագահ Ռեջեփ Էրդողանը Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Փութինի հետ հանդիպումների ժամանակ միշտ է քննարկում Ղարաբաղի հարցը:*

*«Երբ ԵԱՀԿ Մինսկի խմբի աշխատանքն արդիւնք չէր տալիս, Թուրքիայի նախագահը նշում էր, որ Ռուսաստանը միջնորդի կարգավիճակով կարող է լուծում տալ հարցին» . ասել է Չաւուշօղլուն՝ ըստ էութեան արձանագրելով, որ պաշտօնական Անքարան շարունակելու է աւելացնել ջանքերը Ղարաբաղի հակամարտութեան լուծման հարցում:*

*Նկատենք, սակայն, որ Անքարան դեռեւս 90-ականներից՝ արդէն 30 տարի է՝ այս Թեզերն է*

Շար.ը էջ 5

մասիս
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ
ՎԱՀԷ ԱՋԱՊԱՀԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
*http://www.massisweekly.com*

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

# ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

## Նախարար Արայիկ Յարութիւնեան Հրաժարելու Նպատակ Չունի


Նախարար
Արայիկ Յարութիւնեան

Կրթութեան Գիտութեան Մշակոյթի Սպորտի Նախարար Արայիկ Յարութիւնեանի կարծիքով, տարբեր հրադարձութիւններ, արուեստի գործեր սատանիզմի հետ կապելը կ'ուղղորդուի շարք մը շրջանակներու կողմէ:

«Հասկանալի է, թէ որտեղից են այդ քամիները փչում, այն մեդիակենտրոններից, որոնք վերահսկւում են Քոչարեանի կողմնակիցների, տարբեր քաղաքական ուժերի, «մերժուածների» կողմից, իհարկէ, կան հասարակական-քաղաքական խմբեր, որոնք ունեն նորմալ մտահոգութիւններ»,- «Ազատութեան» հետ հարցազրոյցի ընթացքին ըսած է Նախարարը:

Նախարարը անդրադարձած է նաեւ Նոյեմբեր 2-ին Հանրապետութեան հրապարակի մետրոյին յարակից տարածքին վրայ բեմադրուած «Ցուզանք ու Զանգ» ներկայացումին, որմէ ետք Նախարարութիւնը յայտնուեցաւ հանրութեան ուշադրութեան կենտրոնը եւ հնչեցին դժգոհութեան, որ ֆինանսաւորուած է ոչ թէ արուեստ, այլ սատանիզմ եւ նոյնասեռականութեան քարոզ:

«Նման երեւոյթ յաճախ ենք տեսնում եւ այդ անուան տակ՝ ԼԳԲՏ, սատանիզմի անուան տակ որակւում են իրադարձութիւններ, որոնք երբեմն ընկալելի ու հասկանալի չեն, գուցէ կատարման տեսակէտից վատն են, եւ շատ յստակ որոշակի մեդիակենտրոններ ու քաղաքական կենտրոններ դա թիրախաւորում են, դարձնում են օրակարգ, մինչդեռ կարծում եմ, որ եթէ այդտեղ որակի խնդիր կայ, դա մասնագէտների քննարկման հարց է: Դժուար թէ կարելի է խօսել արժէքների փոփոխութիւնների մասին, որովհետեւ մենք հսկայական քանակութեամբ դրամաշնորհներ ենք տրամադրում շատ տարբեր հարցերով՝ Արցախի, ազգային տարբեր հարցով, կրթական, մեր ազգային համակարգի»,- մանրամասնեց Յարութիւնեան:

Արայիկ Յարութիւնեանը նաեւ յորդորեց ՀՅԴ-ի երիտասարդական կառոյցին, որը մինչեւ Հինգշաբթի վերջնաժամկէտ տուած է Նախարարին հրաժարական ներկայացնելու համար, չխօսել կրթութեան մասին:

«Ով ով խօսի կրթութիւնից եւ այս ոլորտից, «Դաշնակցութիւնը» եւ դաշնակներն իրաւունք չունեն դրան անդրադառնալու, ես նկատի ունեմ տեղի դաշնակցական կառոյցին, որովհետեւ արտասահմանում դաշնակցականների հետ շատ արդիւնաւէտ համագործակցում ենք: Եթէ որդեգրել էի, որ Լեւոն Մկրտչեանի եւ նրա գործընկերների բերած աւերածութիւնները կրթութեան ոլորտում չէի հանրայնացնելու, այս յայտարարութիւնից յետոյ ցոյց եմ տալու, թէ նրանք ինչ աւերածութիւններ են բերել կրթութեանը»,- ըսաւ Նախարար Յարութիւնեան:

## Վերսկսած է Ռոպերթ Քոչարեանի եւ Անոր Նախկին Երեք Ենթականերու Գործով Դատական Նիստը

Երեւանի ընդհանուր իրաւասութեան դատարանէն ներս վերսկսած է Հայաստանի երկրորդ նախագահ Ռոպերթ Քոչարեանի եւ անոր նախկին երեք ենթականերու գործով դատական նիստը:

Հոկտեմբեր 15-ին նիստը յետաձգուած էր գլխաւոր ամբաստանեալի բացակայութեան պատճառով, որ վիրահատութենէն ետք չէր ներկայացած նիստին:

Քոչարեանի փաստաբանները դարձեալ միջնորդութիւն ներկայացուցած են՝ նախկին նախագահը գրաւի դիմաց ազատ արձակելու դիմումով:

Ռոպերթ Քոչարեանը կը մեղադրուի 2008-ի իրադարձութիւններու ժամանակ սահմանադրական կարգը տապալելու, ինչպէս նաեւ գործարար Սիլվա Համբարձումեանէն առանձնապէս խոշոր չափերով կաշառք ստանալու մէջ:

Նախկին նախագահը մեղադրանքը չընդունիր, ան կը յայտարարէ, որ կ'ենթարկուի քաղաքական հետապնդման:

Հայաստանի երկրորդ նախագահը Յունիս 25-էն կալանքի տակ է:

## Մանուէլ Գրիգորեանը Իրեն Պատկանող 109 Միաւոր Անշարժ Գոյքը կը Փոխանցէ Դատարանի Պահուստային Հաշիւին

Ազգային ժողովի նախկին պատգամաւոր Մանուէլ Գրիգորեանը իրեն պատկանող «Արա եւ Այծեմնիկ» ընկերութեան 100 տոկոս բաժնետոմսերը, 109 միաւոր անշարժ գոյքը պիտի փոխանցէ դատարանի պահուստային հաշիւին: Ինչպէս կը տեղեկացնէ է «Արմէնփրես»-ը, Նոյեմբեր 5-ին Երեւանի ընդհանուր իրաւասութեան դատարանի մէջ այս մասին ըսած է նախագահող դատաւոր Մնացական Մարտիրոսեանը՝ հրապարակելով Մանուէլ Գրիգորեանէն ստացած գրութիւնը:

Գրիգորեանի պաշտպանները միջնորդած են նաեւ Գրիգորեանի խափանման միջոց կալանաւորումը փոխել՝այլընտրանքային խափանման միջոցով, քանի որ Գրիգորեանի առողջական վիճակը երթալով աւելի կը վատանայ:

## Սերժ Սարգսեան «Կը Վախնամ Անպատասխանատու Ամբոխավարներու Կործանարար Քաղաքականութենէն»


Հայաստանի Նախկին
Նախագահ Սերժ Սարգսեան

Հայաստանի նախկին նախագահ Սերժ Սարգսեանը քննադատած է այսօրուայ իշխանութիւնները՝ յայտարարելով, թէ կը վախնայ «անպատասխանատու պոպուլիստներու ամբոխավարներու՝ մեր հայրենիքի համար կործանարար քաղաքականութենէն»:

«Ինչպէս յայտնի է, ոչ մի բանից չի վախենում միայն կատարեալ յիմարը: Ես 88 թուականից յետոյ իրօք վախեցել եմ՝ վախեցել եմ կորցնել մեր հայրենիքի մի մասը՝ Լեռնային Ղարաբաղը, ինչը, ի հարկէ, շատ մեծ ու իրական վտանգ կը բերէր մեր հայրենիքի մնացած ու վերջին մասի համար: Բայց հազարաւոր, տասնեակ հազարաւոր նուիրեալների հետ միասին, նայելով այդ վախի աչքերի մէջ, մենք կարողացել ենք յաղթահարել այդ վախը՝ պատերազմի՝ ձեզ յայտնի արդիւնքներով», - ըսած է Հայաստանի երրորդ նախագահը՝ շարունակելով. - «Հիմա ես վախենո՞ւմ եմ, թէ՞ չեմ վախենում: Հիմա էլ եմ վախենում, վախենում եմ անպատասխանատու պոպուլիստների ամբոխավարների՝ մեր հայրենիքի համար կործանարար քաղաքականութիւնից»:

«Իմ անձի հետ կապուած վախենալու որեւէ բան չունեմ: Եթէ ինձ ձերբակալելով մեր ժողովուրդը գոհ ու երջանիկ կը լինի, եթէ ինձ ձերբակալելով «Մարտի 1»-ը, «Հոկտեմբերի 27»-ը կը համարուի ամբողջովին բացայայտուած, եթէ ինձ ձերբակալելով մեր երկրին սպառնացող վտանգները կը չէզոքանան, եթէ ինձ ձերբակալելով Լեռնային Ղարաբաղի բանակցութիւնները կը վերադառնան ճիշդ ուղի, ապա թող ձերբակալեն», - յայտարարած է Նախկին Նախագահը:

## Վարչապետը Եւ «Իմ Քայլը» Խմբակցութիւնը Քննարկած Են Հանրային Խորհուրդի Նախագահի Պաշտօնավարման Հարցը


Խորհրդարանի փոխխօսնակ
Ալեն Սիմոնեան

Իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութեան գրասենեակէն ներս վարչապետ Նիկոլ Փաշինեանի եւ Ազգային ժողովի «Իմ քայլը» խմբակցութեան պատգամաւորներու հանդիպման ընթացքին քննարկուած է նաեւ Հանրային խորհուրդի նախագահ Վազգէն Մանուկեանի պաշտօնավարման հարցը: Խորհրդարանի փոխխօսնակ Ալեն Սիմոնեանը, սակայն, հանդիպումէն ետք լրագրողներու հետ զրոյցի ժամանակ չէ յստակեցուցած վարչապետի դիրքորոշումը:

Պատգամաւոր Արման Պապաճանեանը անցեալ շաբաթ Մանուկեանը պաշտօնանկ ընելու պահանջով դիմած էր Փաշինեանին՝ պնդելով, թէ Հանրային խորհուրդի նախագահը քաղաքական ընդգծուած կողմնակալ յայտարարութիւններ կ'ընէ:

Ալեն Սիմոնեան ըսած է՝ չէ քննարկուած խորհուրդի լուծարման հարցը, սակայն ինք անձամբ կը կարծէ, որ այդ կառոյցը անիմաստ է եւ ընելիք չունի: «Երբ նայում ես այդ կառոյցի պատմութիւնը, հասկանում ես, որ այդ կառոյցը որեւիցէ պտուղ չի տուել», - յայտարարած է ԱԺ փոխնախագահը՝ շարունակելով. - «Դէ գիտէ՞ք ինչ, Վազգէն Մանուկեանը ասում է, որ ինքը պատրաստ է հրաժարական տալ, եթէ վարչապետը չի ուզում իր հետ աշխատել: Նախ, չեմ հասկանում՝ ինչի՞ այսքան քննադատութիւններից եւ մնացած բանից յետոյ ի՞նքը, հենց ի՞նքը նման որոշում չի կայացնում, եթէ ինքը իրեն տեսնում է քաղաքական դաշտում, այսօր ես կարդացի, որ նոյնիսկ պատրաստւում է քաղաքականութեամբ զբաղուել, եւ այլն, եւ այլն: Իր գործն է»:

Ինքը՝ Վազգէն Մանուկեանը, օրեր առաջ յայտարարած էր՝ պատրաստ է ցանկացած պահի դիմում գրելու եւ հեռանալու պաշտօնէն, եթէ վարչապետը հրաւիրէ իրեն ու ըսէ, որ իրենց համատեղ աշխատանքը չի յաջողիր:

Սիմոնեանը անդրադարձած է նաեւ Սերժ Սարգսեանի՝ ներկայ իշխանութիւններուն ուղղուած քննադատութիւններուն:

«Ես կարծում եմ, այնուամենայնիւ, վախեցած մարդու ելոյթ էր, հա՞, եւ դա բնական եմ համարում, որովհետեւ հասկանալով, որ, այնուամենայնիւ, այն ամէնը, ինչ որ արուել է, եւ այն յանձնաժողովը, թէկուզ ապրիլեան յանձնաժողովը, կամ, ենթադրենք, էն քրէական գործերը, որտեղ իր ընտանիքի բազմաթիւ անդամներ են անցնում, մի օր եւ կարող է գալ եւ կպնի, ես անձամբ ենթադրում եմ, որ մի օր տենց բան լինելու է», - յայտարարած է խորհրդարանի փոխխօսնակը:

## ԼՈՒՐԵՐ

# Փաշինեան. ԼՂ Բանակցային Գործընթացին Մէջ Կայ Բաւականին Հետաքրքրական Տեղաշարժ



Վարչապետ Նիկոլ Փաշինեան Ֆէյսպուքեան ուղիղ ելոյթի ընթացքին

*Ֆէյսպուքեան ուղիղ եթերով վարչապետ Նիկոլ Փաշինեան անդրադարձած է Լեռնային Ղարաբաղի խնդրին՝ վստահութիւն յայտնելով, որ բանակցութիւններուն մէջ տեղաշարժ կայ եւ այն պիտի շարունակուի:*

*Մօտ երկու ամսուան դադարէ ետք Փաշինեան վերսկսած է «Զրոյց քաղաքացիի հետ» շարքը՝ եթերը նուիրելով Ղարաբաղի թեմայի շուրջ շահարկումներուն. - «Բարդ չձեւակերպեմ, ձեւակերպեմ դրա բնութագրումը: Բնութագրումը հետեւեալն է: Հիմա էլ թեզ են դնում շրջանառութեան մէջ, որ այ, քանի որ կառավարութիւնը կամ վարչապետը՝ ես անձամբ, չեն համաձայնւում յանձնել կամ զիջումներ անել, կամ, կը ներէք եթէ շատ կոպիտ ասեմ, չեն համաձայնւում հողերը յանձնել, դա նշանակում է բանակցութիւնները մտել են փակուղի, եւ ահա սկսել են մարդկանց վախեցնել պատերազմով»:*

*Ըստ վարչապետի, սա ղարաբաղեան հարցի շուրջ շահարկումներէն վերջինն է: Մինչդեռ Փաշինեանը նկատած է, որ հակառակ հայ-ատրպէյճանական յարաբերութիւններուն մէջ առկայ մշտական վտանգին, այնուամենայնիւ վերջին 1,5 տարուան մէջ սահմանը համեմատաբար աւելի հանգիստ էր - «Ցաւօք սրտի, մենք այսօր էլ ունենում ենք զոհեր: Սա ինչի՞ համար եմ ասում: Ցոյց տալու համար, որ ընդհանրապէս ոչ մէկ չի ասում, թէ Ղարաբաղի հարցը կարգաւորել ենք եւ արդէն վերջ՝ տեւական, խաղաղ կարգաւորումը հասած է: Բայց, միւս կողմից, ես կարող եմ արձանագրել, որքան էլ դա տարօրինակ թուայ կարծում եմ, որ բանակցային գործընթացում կայ տեղաշարժ, բանակցային գործընթացում կայ բաւականին հետաքրքիր տեղաշարժ, եւ այդ տեղաշարժը, ես լաւատես եմ, որ շարունակուի: Այդ տեղաշարժը կը զարգանայ, եւ ըստ էութեան, ասել եմ, որ Աշխապատում նոյնպէս զրոյց ենք ունեցել Ատրպէյճանի նախագահի հետ, քննարկում ենք ունեցել»:*

*Փաշինեանը կրկին նշած է, թէ ինչ է իր կառավարութեան մօտեցումը Արցախի հարցի կարգաւորման գործին, եւ ինչպէս իրենք կը վարեն բանակցութիւնները:*

*«Հարցի լուծման հնարաւոր տարբերակը պէտք է ընդունելի լինի Հայաստանի, Ղարաբաղի եւ Ատրպէյճանի ժողովրդի համար», - յայտարարած է Փաշինեանը: - «Եւ իմ հիմնական խնդիրն է բանակցային սեղանի շուրջ փնտռել եւ գտնել Հայաստանի ժողովրդի համար, հայ ժողովրդի համար ընդունելի լուծում»:*

# Տօնոյեան. «Զօրավարներու Դէմ Յարուցուած Քրէական Գործերը Հրամանատարական Կազմը Զգօնութեան Մէջ Կը Պահեն»



Պաշտպանութեան նախարար Դաւիթ Տօնոյեան

*Պաշտպանութեան նախարար Դաւիթ Տօնոյեանը կը վստահեցնէ՝ զօրավարական կազմին շրջանակէն ներս մտահոգութիւններ չկան: Ինչ կը վերաբերի որոշ զօրավարներու դէմ յարուցուած քրէական գործերուն, ապա, Տօնոյեանի փոխանցմամբ, այն կը մտահոգէ, բայց միեւնոյն ժամանակ բարձրագոյն հրամանատարական կազմը զգօնութեան (տոնուսի) մէջ կը պահէ:*

*«Ազատութեան» դիտարկման՝ վարչապետ Նիկոլ Փաշինեանը անդրադարձած է այն խօսակցութիւններուն, թէ ինքը կը թուլացնէ, կը վարկաբեկէ զօրավարները՝ հաշուի առնելով քրէական գործերը, որ ներկայացուած են տարբեր զօրավարներու դէմ, Դաւիթ Տօնոյեանը արձագանգած է. «Չկայ այդպիսի բան, ինձ թւում է՝ որոշ խոհանոցային խօսակցութիւններ, որոնք կուտակւում-կուտակւում եւ հասնում են վարչապետին, իր մօտ տպաւորութիւն են ստեղծում, թէ զօրավարների մօտ կայ դժգոհութիւն: Կարող է կան զօրավարներ, որոնց մօտ կան այդ մտահոգութիւնները, բայց այն, ինչ որ արուել է այս վերջին մէկուկէս տարուայ մէջ, ես չեմ կարծում, որ զօրավարական կազմին մօտ պէտք է դժգոհութիւն առաջանայ»:*

*Դիտարկման, թէ կան քրէական գործեր, որոնցով տարբեր զօրավաներ կ'անցնին, Դաւիթ Տօնոյեանը պատասխանած է. «Դա մտահոգում է, ի հարկէ, բայց կարծում եմ, որ դա մեր բարձրագոյն հրամանատարական կազմին զգօնութեան մէջ է պահում»:*

*Նիկոլ Փաշինեանը ֆէյսպուքեան ուղիղ եթերի ժամանակ նաեւ նշած էր, որ առաջին անգամ է, որ մէկուկէս տարուայ ընթացքին՝ այդքան կարճ ժամանակահատուածի մէջ, այդչափ բարեփոխումներ տեղի կ'ունենան Զինուած ուժերուն մէջ:*

*Հարցին, թէ անցեալին փոխնախարարի պաշտօնը զբաղեցուցած Տօնոյեանը իսկապէս համեմատութեան մէջ այդպիսի տեղաշարժեր նկատած է, ան արձագանգած է. «Արագութիւնները մեծացել են, արագութիւնները շատ մեծ են այս պահին, բոլոր ոլորտներում՝ ե՛ւ կենցաղային ապահովման գինծառայողների, ե՛ւ նիւթաթեխնիքական ապահովման, սպառազինութեան ապահովման»:*

*Իսկ ճշդման, թէ ինչով պայմանաւորուած է այդ մէկը, ինչո՞ւ չկար այդ արագութիւնը անցեալին, ան նախ արձագանգած է՝ բարձր տրամադրուածութեամբ, ապա շարունակած. «Այդպիսի բան չկայ, նախկինում էլ են եղել գործընթացներ, վարչապետը խօսել է կարճ ժամանակահատուածի համար, որ իրականում կարճ ժամանակահատուածում մեծ փոփոխութիւններ են կատարուել, բայց այնպէս չէ, Զինուած ուժերը չեն դոփել տեղում»:*

# Էրտողանի Այցելութիւնը ԱՄՆ Հնարաւոր է Յետաձգուի

*Թուրքիոյ նախագահ Ռեճէպ Թայյիպ Էրտողանի այցելութիւնը Ուաշինկթըն հնարաւոր է յետաձգուի: Այն նախատեսուած էր յաջորդ շաբաթ: «Արմէնփրես»-ի հաղորդմամբ, «Ռոյթըրս»-ը կը տեղեկացնէ, որ այն կ'ըլլայ ի նշան բողոքի՝ ԱՄՆ Ներկայացուցիչներու պալատի կողմէ Հայոց ցեղասպանութեան ճանաչման դէմ:*

*Էրտողանը Ուաշինկթըն պէտք է ըլլար Նոյեմբեր 13-ին ԱՄՆ նախագահ Տանըլտ Թրամփի հրաւէրով, սակայն նախորդ շաբաթ յայտարարած է, որ քուէարկութիւնը հարցականի տակ կը դնէ յետագայ նախագիծերը:*

*ԱՄՆ Քոնկրէսի ներկայացուցիչներու պալատէն ներս Հոկտեմբեր 29-ին կայացած քուէարկութեան արդիւնքով ձայներու մեծամասնութեամբ ընդունուած է Հայոց ցեղասպանութիւնը ճանչցող բանաձեւը: Քուէարկութեան մասնակցած քոնկրէսականներէն կողմ քուէարկած է 405-ը, դէմ՝ 11-ը, ձեռնպահ՝ 3-ը, իսկ 14 քոնկրէսական չէ քուէարկած:*

# Freedom House. Հայաստանի Մէջ Համացանցը Ազատ Է

Freedom House *միջազգային իրաւապաշտպան կազմակերպութիւնը հրապարակած է 2019-ին համացանցի ազատութեան առումով վարկանշային ցանկը:*

*«Հայաստանի մէջ կը շարունակուին 2018-ի Թաւշեայ յեղափոխութեան արդիւնքով յառաջացած դրական փոփոխութիւնները: ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան գլխաւորած է բովանդակութեան սահմանափակումներու եւ օգտատէրերու իրաւունքներու խախտումներու նուազեցման ուղղուած գործողութիւնները: Թուային լրատուամիջոցները տնտեսական եւ քաղաքական ճնշումներէն մեծ ազատութիւն ստացած են»,- կ՚ըսուի կազմակերպութեան զեկոյցին մէջ:*

*Համացանցային տիրոյթի ազատութեան ցուցանիշով Հայաստան հաւաքած է 100-էն կէտէն 76 եւ կը կը գտնուի 8-րդ տեղը: Ան առաջ անցած է այնպիսի երկիրներէ, ինչպիսիք են Ճափոնը եւ Հարաւային Քորէան:*

*Հարեւան Վրաստանը 1 կէտ պակաս հաւաքած է եւ նոյնպէս ներառուած է ազատ համացանցային տիրոյթ ունեցող երկիրներու ցանկին մէջ:*

*Ատրպէյճանը եւ Թուրքիան ընդգրկուած են անազատ համացանցային տիրոյթ ունեցող երկիրներու ցանկին մէջ եւ համապատասխանաբար 39 եւ 37 կէտ ստացած են:*

# Այլեւս երբեք. Ճօ Պայտընը Կ'ողջունէ Հայոց Ցեղասպանութեան Ճանաչումը

*ԱՄՆ նախկին փոխնախագահ, 2020-ի ԱՄՆ դեմոկրատական կուսակցութեան նախագահի թեկնածու Ճօ Պայտընը կ'ողջունէ ԱՄՆ Ներկայացուցիչներու պալատի կողմէ 296 բանաձեւի ընդունումը, որ կը ճանչնայ Հայոց ցեղասպանութիւնը:*

*«Ես կ'ողջունեմ Ներկայացուցիչներու պալատի 296 բանաձեւը, որ կը ճանչնայ եւ կը դատապարտէ 1915-23 թուականներու Հայոց ցեղասպանութիւնը: Այս ցեղասպանութիւնը ճանչնալով՝ մենք կը յարգենք անոր զոհերու յիշատակը եւ կ'երդուինք՝ այլեւս երբեք»,- թուիթըրի էջին գրած է Ճօ Պայտընը:*


**ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ**

**ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)**

**ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ**

**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**

**(626) 797-7680**

## Հայաստանի եւ Յունաստանի Նախագահները Քննարկած են Համագործակցութեան խորացման Հնարաւորութիւնները



Հայաստանի եւ Յունաստանի նախագահները մամլոյ ասուլիսի ընթացքին

Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Արմէն Սարգսեանն ու պաշտօնական այցով Հայաստան ժամանած Յունաստանի Հանրապետութեան Նախագահ Փրոքոփիս Փաւլոփուլոսը քննարկած են երկու երկիրներու միջեւ համագործակցութեան խորացման հնարաւորութիւնները: Այս մասին երկու երկիրներու ղեկավարներու համատեղ մամլոյ ասուլիսի ընթացքին ըսած է ՀՀ Նախագահ Արմէն Սարգսեանը:

«Ուրախ եմ ձեզ տեսնել Երեւանում, եւ յոյս ունեմ, որ կը տեսնեմ ապագայում կրկին, ոչ միայն պաշտօնական, այլեւ աշխատանքային այցերով: Մեր հանդիպումն այսօր անցաւ շատ ջերմ, բարեկամական մթնոլորտում, երկու բազմադարեայ բարեկամ ժողովուրդների եւ նաեւ երկու շատ գործնական եւ իրենց պետութեանը ծառայող մարդկանց աշխատանքային մթնոլորտում: Շատ բովանդակալից քննարկումներ ունեցանք լայն շրջանակով խնդիրների վերաբերեալ: Պայմանաւորուեցինք, որ պէտք է ջանքեր ներդնենք, որ հայկական եւ յունական մեծ սփիւռքները, որոնք տարածուած են ամբողջ աշխարհով, համագործակցեն եւ ծառայեն մեր երկու պետութիւնների եւ ազգերի շահերին»,- ըսած է Նախագահը:

Արմէն Սարգսեանը նշած է, որ զրոյցի ընթացքին անդրադարձ կատարուած է նաեւ երկու երկիրներու պատմութեան:

«Չէինք կարող չխօսել մեր պատմութեան մասին: Երկու ժողովուրդներ, որոնք ոչ միայն ընդհանուր պատմութիւն, ընդհանուր մշակոյթ ունեն, նաեւ ընդհանուր մօտեցումներ ունեն: Մեր բարեկամութիւնը հազարամեակների պատմութիւն ունի: Մօտ 100 տարի առաջ հայերն անցել են Մեծ եղեռնի օրհասական ճանապարհով, Պոնտոսի յոյները եւս նմանատիպ ցեղասպանութեան ճանապարհ են անցել, եւ երկու ազգերը վերականգնել են իրենց, որպէս փոքր, բայց համաշխարհային պետութիւններ»,- նշած է Սարգսեանը:

## Ամուլսարի Գործով Քննչական Կոմիտէն Նոր Տուեալներ Ձեռք Բերած է



Ամուլսարի հանքի շահագործման գործով Քննչական կոմիտէն շարք մը տուեալներ ձեռք բերած է, որոնք կ'ենթադրեն քննութիւն կատարել նոր ուղղութեամբ: Կոմիտէի ղեկավար Հայկ Գրիգորեանի խօսքով՝ քննութիւնը պիտի ընթանայ երեք մասերով, անոնցմէ մէկը շրջակայ միջավայրի վրայ ազդեցութեան ժամանակին տրուած գնահատականին (ՇՄԱԳ) կը վերաբերի:

«Բնապահպանութեան նախարարութեան էդ ՇՄԱԳ-ի ՊՈԱԿ-ը, որը որ տալիս է եզրակացութիւնը՝ հիմնուելով այլ շահագրգիռ մարմինների կողմից տրուած եզրակացութիւնների վրայ, նախ պէտք է հասկանանք՝ ինչո՞ւ ժամանակին չի ստուգուել, կամ արդեօ՞ք պատշաճ են ստուգուել ՇՄԱԳ-ում տեղ գտած այդ տուեալները», - ըսած է Գրիգորեանը:

Միւսը կառավարութեան պատուէրով Ամուլսարի ՇՄԱԳ-ի ուսումնասիրութիւնը կատարած «Էլարտ» ընկերութեան կը վերաբերի: «Եւ երկրորդը՝ ես կարծում եմ, որ «Էլարտ»-ի փորձագէտներին իրենց տուած եզրակացութեան շուրջ հարցաքննելու կարիք կայ՝ պարզաբանումնե՛ր տալու համար», - նշած է Քննչական կոմիտէի նախագահը:

Քննչական կոմիտէն ի սկզբանէ Բնապահպանութեան նախարարութենէն պահանջած է եւ ստացած Ամուլսարի հանքի շուրջ բոլոր կարեւոր փաստաթուղթերը, սակայն երբ վարչապետ Փաշինեանը յանձնարարած է ստուգել՝ կա՞յ նոր ՇՄԱԳ կատարելու անհրաժեշտութիւն, թէ՞ ոչ, ըստ Գրիգորեանի ի յայտ եկած են շարք մը փաստաթուղթեր, որոնք իրենց չէին տրամադրած. - «Եւ դա պայմանաւորում է քննութեան նոր զարգացում»:

Այս մասով Քննչական կոմիտէի նախագահը այլ մանրամասներ չէ ներկայացուցած:

Դէպքերու այսպիսի զարգացումը սպասելի էր, «Ազատութեան» հետ զրոյցի ժամանակ ըսած է բնապահպան Սիլվա Ադամեանը: Ըստ անոր՝ կայ շրջանակ մը, որ որոշ տուեալներ թաքցուցած է: «Այսինքն, մարդիկ, ովքեր իբր փորձագէտներ են, փորձել են էնպիսի տպաւորութիւն ստեղծել, որ «մենք ամէն ինչ ուսումնասիրել ենք»՝ ե՛ւ ջրերի վրայ, ուրեմն, ամբողջ ազդեցութիւնը, ե՛ւ փոշու ազդեցութիւնը շրջակայ միջավայրի վրայ, եւ ի հարկէ, ամենամեծ փաստը, որ թաքցուել է բոլորից, դա ուրանի առկայութիւնն է շրջակայքում», - նշած է բնապահպանը:

Նախորդ դարու կէսերուն սովետական իշխանութիւնները Ամուլսարի տարածքին հետազօտութիւն կատարած են, որուն յղում ընելու ժամանակ շարք մը բնապահպաններ պնդած են, որ այնտեղ ռատիաքթիւ (շողարձակ-շողագործօն) տարր հանդիսացող ուրան կայ, թէկուզ՝ չնչին քանակով:

«Եթէ հանքի շրջակայքում կայ ուրան, ապա հնարաւոր չի, որպէսզի հանքը շահագործելու ժամանակ էդ ուրանը ազդեցութիւն չունենայ շրջապատի վրայ», - ընդգծած է Սիլվա Ադամեանը: Հարցին՝ «այսինքն, ըստ Ձեզ, ՇՄԱԳ-ի մէջ այդ փաստը անտեսե՞լ են», բնապահպանը արձագանգած էգ - «Ի հարկէ չկայ»:

## ՀԱՊԿ-ը Կայունութեան Գործօն

Շարունակուած էջ 1-էն

ծաշրջանային եւ համաշխարհային արդի իրողութիւններին: Եւ ես շատ ուրախ եմ, որ մենք բաւական կառուցողական համագործակցում ենք կազմակերութեան հետագայ զարգացման ուղղութեամբ»,- ըսած է Փաշինեան:

Վարչապետը գոհունակութիւն յայտնած է, որ կազմակերպութեան անդամ երկիրները յաջողած են համաձայնութեան գալ կազմակերպութեան գլխաւոր քարտուղարի նշանակման հարցին շուրջ, եւ նշած, որ հետագային նման խնդիրներէն խուսափելու համար հարկաւոր է որոշակի իրաւական փոփոխութիւններ մտցնել ՀԱՊԿ կարգաւորումներուն մէջ:

### ՌԴ-ն Հայաստանին այնպիսի զէնքեր կը վաճառէ, որոնք երբեք այլ երկիրներու չի մատակարարեր

Ռուսաստանի Դաշնութիւնը Հայաստանի Հանրապետութեան այնպիսի զինատեսակներ կը վաճառէ, որոնք երբեք որեւէ այլ երկրի չէ վաճառած:

«Արմէնփրես»-ի փոխանցմամբ՝ այս մասին Նոյեմբեր 5-ին Երեւանի մէջ կայացած Հաւաքական Անվտանգութեան Պայմանագրի Կազմակերպութեան Խորհրդարանական վեհաժողովի 12-րդ լիագումար նիստի ընթացքին լրագրողներու հետ զրոյցի ժամանակ ըսած է ՌԴ Պետական Տումայի՝ Անկախ Պետութիւններու Համագործակցութեան (ԱՊՀ), Եւրասիական ընդելուզման եւ հայրենակիցներու հետ կապերու կոմիտէի ղեկավար Լէոնիտ Քալաշնիքովը, պատասխանելով Ռուսաստանի Դաշնութեան կողմէ ՀԱՊԿ անդամ Հայաստանի հակառակորդ Ատրպէյճանին զէնք վաճառելու մասին հարցին:

«Ռուսաստանը զէնք կը վաճառէ ոչ միայն Ատրպէյճանին, այն զէնք կը վաճառէ նաեւ իր դաշնակիցներուն եւ գործընկերներուն, այդ շարքին՝ Հայաստանին կը վաճառէ աւելի շատ, այնպիսի զինատեսակներ, որոնք երբեք չի վաճառեր այլ երկիրներու»,- ըսած է Քալաշնիքովը:

## Թուրք-Ատրպէյճանական Յոխորտանքը

Շարունակուած էջ 2-էն

հնչեցնում: Թուրքական դիւանագիտութիւնը 3 տասնամեակ յոխորտում է Ղարաբաղը վերցնելու մասին՝ հրաշալի հասկանալով ու թերեւս իրեն հաշիւ տալով, որ այդ հարցի կարգաւորման մանդատը բացառապէս ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներինն է, եւ որեւէ այլ երկրի միջամտութիւնը պարզապէս ոտնձգութիւն կը դիտարկուի: Իսկ այս հարցում անընդմէջ կարեւորելով Փութինի դերակատարութիւնը, զանազան յիշատակումներ անելով՝ պարզապէս արենա են բերում այն փաստը, որ ռուսական կողմի հետ իւրաքանչիւր հանդիպմանը առիթը բաց չեն թողնում նախագահ Փութինին յիշեցնելու Ղարաբաղի իրենց «բաց վէրքը»:

Յիշեցնենք, որ դեռեւս այս տարեսկզբին էր Չաւուշօղլուն յայտարարել, թէ առանց Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման անհնար է կայունութիւն ապահովել Կովկասում եւ կարգաւորել Թուրքիայի եւ Հայաստանի յարաբերութիւնները: Նա ընդգծել էր, որ Թուրքիան 2019թ.-ին այդ հարցերում աւելի հետեւողական կը լինի:

«ԺՈՂՈՎՈՒՐԴ»

www.massisweekly.com

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

## Հայ Սակրաւորները Ականազերծած են 116000քմ Տարածք Սուրիոյ Մէջ



Սուրիոյ մէջ մարդասիրական առաքելութիւն իրականացնող հայ մասնագէտներու երրորդ խումբի սակրաւորները, Հոկտեմբեր 8-30, ճարտարագիտական հետազօտութեան եւ մաքրման աշխատանքներու ժամանակ, ականազերծած են 1500քմ տարածք:

Ըստ Armenpress.am-ի՝ Մարդասիրական ականազերծման եւ փորձագիտական կեդրոնի հասարակայնութեան հետ կապերու պատասխանատու Նազելի Ելպագեան յայտնած է, թէ ընդհանուր առմամբ՝ Փետրուար 15-էն մինչ օրս հայ մասնագէտները մաքրած են 116000քմ տարածք:

Նոյն ժամանակահատուածին մարդասիրական խումբի բժիշկները մասնագիտական օգնութիւն ցուցաբերած են 688 մարդու: Հայաստանցի բժիշկները սուրիացի մասնագէտներուն հետ գործակցութեամբ իրականացուցած են հիւանդ զինուորականներու եւ տեղի խաղաղ բնակչութեան հետազօտութիւններ ու բժշկական միջամտութիւններ:

Վիրաբուժական օգնութիւն ստացած է 39 քաղաքացի, ներգանկային մասնագէտի դիմած է 76 մարդ, անմիջական բուժում ստացող հիւանդներուն թիւը 86 է, դիմածնօտային հետազօտութեան ենթարկուած է 11 մարդ, կանացի բժիշկները բուժած են 191, մաշկաբանները՝ 104, ատամնաբոյժը՝ 13 հիւանդ: Հայ մասնագէտները աջակցած են 108 երեխայի: Ընդհանուր առմամբ՝ Փետրուար 15-էն մինչ օրս բժշկական օգնութիւն ցուցաբերուած է 6288 քաղաքացիի:

## Միայն Թուրքիոյ Խորհրդարանը Կրնայ Բուժել Հայ Ժողովուրդի Վէրքերը. Կարօ Փայլան



Թուրքիոյ խորհրդարանի քրտամէտ Ժողովուրդներու դեմոկրատական կուսակցութեան հայ պատգամաւոր Կարօ Փայլանը անդրադարձած է ԱՄՆ Ներկայացուցիչներու պալատի կողմէ Հայոց ցեղասպանութեան ճանաչման:

«Ֆէյսպուք»-ի իր էջին Փայլանը գրած է, որ տասնեակ խորհրդարաններէ ետք Հայոց ցեղասպանութիւնը ճանչցաւ նաեւ ԱՄՆ Քոնկրէսի Ներկայացուցիչներու պալատը:

«Մեր ցաւը դարձած է ուրիշներու խորհրդարանի քննարկման առարկան, քանի որ իմ երկիրը 105 տարի է՝ կը հերքէ հայ ժողովուրդի մեծ ողբերգութիւնը: Միակ խորհրդարանը, որ կրնայ բուժել հայ ժողովուրդի վէրքերը, Թուրքիոյ խորհրդարանն է, որուն անդամն եմ ես»,- նշած է ան:

## 2019-ին ԱՄՆ Կառավարութեան Աջակցութիւնը Հայաստանին Աճած է 40 Տոկոսով




Հայաստանի մէջ ԱՄՆ դեսպանութիւնը կը յայտնէ, որ 2019-ի ընթացքին ԱՄՆ կառավարութեան աջակցութիւնը Հայաստանին շարունակած է աւելնալ: Ինչպէս «Արմենփրես»-ը կը հաղորդէ, այս տարի անիկա կազմած է 60 միլիոն ԱՄՆ տոլար, որ նախորդ տարուան համեմատ 40 տոկոսով աւելի է:

Այս ֆինանսաւորումը ԱՄՆ արտաքին գործոց նախարարութեան եւ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալութեան կողմէ տնօրինուող ծրագիրներէն զատ, կը ներառէ նաեւ ԱՄՆ ուժանիւթի, անտառային ծառայութեան եւ պաշտպանութեան բաժանմունքներու ծրագիրները:

ԱՄՆ կառավարութիւնը այս միջոցներով աջակցած է Հայաստանի մէջ ժողովրդավարական զարգացման բազմաթիւ ծրագիրներու, մասնաւորապէս՝ փտածութեան դէմ պայքարի, անվտանգութեան, ուժանիւթի, կրթութեան, անգլերէնի ուսուցման, անտառային ծառայութիւններու, մարդու իրաւունքներու, քաղաքացիական հասարակութեան, եւ պետական կառավարման թափանցիկ ու հաշուետու հաստատութիւններու ամրապնդման, ինչպէս նաեւ՝ իրաւապահ, արդարադատութեան եւ դատաիրաւական ոլորտներու մէջ:

«Միացեալ Նահանգները վերջին 27 տարիներուն աջակցած է Հայաստանի ժողովրդավարական գործընթացներուն եւ հաստատութիւններու զարգացման, եւ մենք մտադիր չենք փոխել ատիկա յատկապէս այժմ, երբ ժողովրդավարութիւնը, նախկինէն աւելի ամուր է Հայաստանի մէջ: Նոյն այս պատճառով ալ հպարտութեամբ կը փաստենք, որ այս տարի աջակցութիւնը կը կազմէ աւելի քան 60 միլիոն ԱՄՆ տոլար», - կը նշուի Հայաստանի մէջ ԱՄՆ դեսպան Լին Թրէյսի:

1992-էն սկսած Միացեալ Նահանգները Հայաստանի յատկացուցած է աւելի քան 2 միլիառ ԱՄՆ տոլարի աջակցութիւն՝ բարելաւելու ժողովուրդի կենսապայմանները եւ աջակցելու ժողովրդավարական, տնտեսական եւ ընկերային կառավարման ամրապնդման ուղղուած ջանքերուն:

## Օրհան Փամուք. «Միակ Բանը, որ Կրնամ Ընել, Ճշմարտութիւնը Ըսելն է»

Յայտնի թուրք գրող Օրհան Փամուքը ԱՄՆ-ի մէջ գիրքի տօնավաճառի ժամանակ ըսած է, որ Հայոց ցեղասպանութեան մասին յայտարարութենէն ետք Թուրքիոյ մէջ հետապնդում սկսած իր նկատմամբ:

Գրականութեան ոլորտի մէջ Նոպէլեան մրցանակակիրը յայտարարած է, որ իրեն խիզախ չի համարեր, եւ ճիշդ կը համարէ ըսել այն, ինչի մասին կը մտածէ:

«Գիտէք, ես կ՛ապրիմ այնտեղ, ուր շատ գրողներ իրենց համոզմունքներու համար բանտ յայտնուած են: Այնպէս որ, ես երջանիկ գրող եմ, եւ միակ բանը, որ կրնամ ընել, ճշմարտութիւնը ըսելն է»,-ըսած է ան:

Rusarminfo-ի փոխանցմամբ՝ այդ խօսքերէն ետք դահլիճին մէջ բուռն ծափահարութիւններ հնչած են:

2005-ին Թուրքիոյ մէջ Օրհան Փամուքի դէմ հետապնդում սկսած է այն բանէն ետք, երբ յայտարարած է, որ Թուրքիոյ մէջ 1 միլիոն հայ ու 30 000 քիւրտ սպանուած է:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 massis2@earthlink.net

MARONIAN
INSURANCE SERVICES
Since 1975, we have proudly served your health and life insurance needs.

HEALTH INSRUANCE
&
MEDICARE (age 65 and over)
Open Enrollment 2020
Starting Oct. 15, 2019
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ
եւ MEDICARE (65 Տարեկան եւ Վեր)
15 Օգոստոս 2019-էն սկսեալ
Մենք ձեզի կ'օգնենք. Խորհրդակցեցէք մեր գործակալներէն մէկուն հետ այսօր՝

We will help you!
Consult with one of our Agents today!
(818) 500 9585
805 E. Broadway, Glendale, CA 91205
sbmaronian@gmail.com
CA INSURANCE LICENSE # 0C99815
MaronianInsurance.com

# Արմէն Արոյեանի Իշխանական Նուիրատուութիւնը՝ Փասատինայի Հայ Կիլիկիա Աւետարանական Եկեղեցիի 97-Ամեայ Ճաշկերոյթին



Շաբաթ, 26 Հոկտեմբեր 2019»-ի երեկոյեան 7:00-ին, ներկայութեամբ՝ Հիւսիսային Ամերիկայի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան Հովուապետ՝ Վեր. Պերճ Ճամպազեանի, Հայաստանի Հանրապետութեան Գլխաւոր Հիւպատոս Դեսպան Արմէն Բայբուրդեանի, Հոգեւոր Հովիւներու եւ Գործիչներու, Փասատինայի Հայ Կեդրոնի Պատասխանատուներու, Ծօ Պաղտատլեանի (որ իր թեկնածութիւնը դրած է Փասատինայի քաղաքապետական Խորհուրդի 4րդ ընտրատարածքի 2020 ի ընտրութիւններուն) եւ խոծ բազմութիւն մը, որոնք համախմբուած էին Փասատինայի Հայ Կիլիկիա Աւետարանական Եկեղեցիի Հէնրի եւ Անալիս Տէրեան սրահէն ներս, ճաշկերոյթի մը, նուիրուած Եկեղեցիի 97 ամեայ տարեդարձին:

Ճաշկերոյթը սկսաւ Կիլիկիա Եկեղեցիի Վարչութեան Ատենապետ՝ Արա Ասիլեանի բարի գալուստի խօսքով:

Ապա Արա Գուրուեան կատարեց Ա.Մ.Ն. եւ Հայաստանի Հանրապետութեան զոյգ քայլերգերը, դաշնամուրի ընկերակցութեամբ՝ Եսթեր Ասիլեանի:

Օրուան հանդիսավարն էր՝ Եկեղեցւոյ Վարչութեան անդամ Օր. Հէլէն Հէյկ որ ձեռնհասօրէն վարեց օրուան յայտագիրը:

Բացման աղօթքը կատարեց՝ Վեր. Պերճ Ճամպազեան:

Գեղարուեստական յայտագրին՝ Ջութակի վրայ յատուկ նուագներով բաժին բերաւ՝ Օրդ. Մարի Հէյկ, դաշնամուրի ընկերակցութեամբ՝ Տիկ. Ալիս Տէր Գէորգեանի:

Ապա Եկեղեցիի Վարչութեան Ատենապետ՝ Արա Ասիլեան ուրախութեամբ յայտարարեց՝ Կիլիկիա Եկեղեցւոյ նուիրեալ անդամ եւ Եկեղեցւոյ Երգչախումբի 46 երկար տարիներու վաստակաշատ խմբավար՝ Արմէն Արոյեանի Ցիսուն հազար Ամերիկեան Տոլարի Իշխանական նուիրատուութիւնը Հայ Կիլիկիա Աւետարանական Եկեղեցիի Երիտասարդաց Կեդրոնին:

Օրուան բանախօսն էր՝ Լոս Անճելըսի մէջ Հայաստանի Հանրապետութեան Գլխաւոր Հիւպատոս Դեսպան Արմէն Բայբուրդեան:

Պրն. Դեսպանը մանրամասնօրէն անդրադարձաւ Հայ ազգի իւրայատկութիւններուն, արժէքներուն, պապերու հաւատքին, Հայաստանի Հանրապետութեան ներկայ վիճակին, Վարչապետ Փաշինեանի Ա.Մ.Ն. այցելութեան, հայրենադարձութեան եւ Հայաստան Սփիւռք յարաբերութեան մասին:



Որմէ ետք հրաւիրուեցաւ Եկեղեցւոյ Աւագ Հովիւը՝ Վեր. Սերոբ Մկրտիչեանը որ իր խօսքին մէջ շնորհակալութեամբ անդրադարձաւ Ճաշկերոյթի ընթացքին բաժին բերողներուն, ներկաներուն եւ յատկապէս Արմէն Արոյեանին, իր իշխանական նուիրատուութեան համար:

Ապա Վեր. Մկրտիչեան, մասնաւորապէս անդրադարձաւ Դեսպան Բայբուրդեանի նուիրական եւ անշահախնդիր ծառայութիւններուն համար թէ Սփիւռքի եւ թէ Հայաստանի մէջ ու ներկաներու ծափահարութիւններով բեմ հրաւիրեց եւ Եկեղեցիի անունով պարգեւատրեց՝ Դեսպան Բայբուրդեանը Հայ Կիլիկիա Աւետարանական Եկեղեցիի «Խաչքար» Գնահատանքով:

Ճաշկերոյթը իր աւարտին հասաւ, ներկաներու Փառաբանութեան երգի երգեցողութեամբ եւ Վեր. Սերոբ Մկրտիչեանի Առաքելական Օրհնութեան աղօթքով:

Հայ Կիլիկիա Աւետարանական Եկեղեցի- Փասատինա

# Կոմիտաս 150

ԷԼԻՆԱՅ ՄԻՐ



Կան մարդկային արժէքներ, որոնց ակունքները տանում են ընդհուպ մինչեւ արարչի կողմից մտածող մարդու ստեղծումը: Այդ արժէքներն անթիւ անհամար են, սակայն գեղեցիկի ընկալումը եւ արուեստների սէրը դրանց մէջ առանձնայատուկ տեղ են գրաւում:

Արուեստի ու գրականութեան սէրը հայ ժողովրդի համար, մարդկային արժէք լինելուց զատ, եղել է նաեւ ազգային գոյատեւման պայման, արհաւիրքների վերապրելու ճանապարհ, օտարութեան մէջ յոյսի կամուրջ: Հայը արարել է իր գիտակցական գոյութեան ողջ ընթացքում, դրա վկայութիւնն են մեր հնագոյն երաժշտութեան, քանդակագործութեան, նկարչութեան եւ ճարտարապետութեան գլուխգործոցները, որոնք շարունակում են հիացնել ու զարմացնել ողջ առաջադէմ մարդկութեանը:

Ասում ենք որտեղ երեք հայ կայ, այնտեղ հայաստան է ստեղծւում, իսկ որտեղ հայ կայ, նա ստեղծագործում է:

Ահա այսպէս Լոս Անջելեսում ապրող հայ նկարիչներն ու արվեստագէտներն ստեղծեցին մի Միութիւն, որը կոչուած է ի մի բերելու հայ ստեղծագործ միտքն ու հոգին, համատեղ ներկայանալու համար հայ համայնքին եւ օտարազգի արուեստասէրին: Միութեան գլխաւոր նպատակներից է նաեւ հանրութեանը ներկայացնել մեր ազգային մեծութիւններին, նշել եւ ոգեկոչել նրանց աւանդը մեր ժողովրդի մշակութային հարուստ ժառանգութեան մէջ:

150 տարի առաջ սեպտեմբերի 26?ին ծնուեց Սողոմոն Սողոմոնյանը- Կոմիտասը: Հայազգի տաղանդաւոր որդին յետագայում պիտի մաքրէր եւ հարստացնէր հայ երգն ու երաժշտութիւնը, նրա օգնութեամբ հայ ժողովուրդը պիտի ճանաչէր իր հոգին եւ հոգեկան ինքնութիւնը: Այսօր աւելի քան արդիական է մեր երիտասարդ սերնդին հաղորդակից անելու հայ ազգի ականաւոր ներկայացուցիչների մշակութային հարուստ ժառանգութեանը:

Կոմիտասի 150 ամեակին նուիրուած համազգային տօնակատարութեանը իր համեստ մասնակցութիւնն է ունենալու նաեւ Հայ Ամերիկեան Արուեստի Միութիւնը: Հայազգի մեծանուն կոմպոզիտոր եւ երաժշտական հանճարին նուիրուած միջոցառումը կ'անցկացուի նոյեմբերի 21 ին, 3601 San Fernando rd., Glendale , Ca 91204, երեկոյեան 5:30-ից մինչեւ 9:30:

Հրաւիրում ենք ձեզ ներկայ գտնուելու եւ մասնակցելու Հայ արուեստագէտների Միութեան կազմակերպած միջոցառմանը նուիրուած Կոմիտասի 150 ամեակին:



## Մեծարանքի Երեկոյ՝ Նուիրուած Վաստակաւոր Ուսուցչուհի՝ Օր. Մաքրուհի Պ. Յակոբեանի





ՄԱՐԻԷԹ ՄԻՆԱՍԵԱՆ-ՕՀԱՆԷՍ

Կազմակերպութեամբ Լոս Անճելըսի Պոլսահայ Միութեան Մշակութային Յանձնախումբին, Շաբաթ, Հոկտեմբեր 26, 2019-ին, երեկոյեան ժամը 8:00-ին, Միութեան «Հրանդ Տինք» դասախօսական սրահին մէջ տեղի ունեցաւ վաստակաւոր ուսուցչուհի՝ Մաքրուհի Պ. Յակոբեանի մեծարանքի երեկոն՝ ներկայութեամբ պատկան մարմիններու ներկայացուցիչներուն, Միութեան անդամներուն եւ հիւրերուն:

*Տասնամեակ մը առաջ կրօնագիտութիւն կ՛աւանդէի Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ Յովսէփեան վարժարանէն ներս ուր կը վարէի նաեւ հոգեւոր հովիւի պաշտօնը չորս տարիներ: Պատահեցաւ որ Վաչէ եւ Թամար Մանուկեան վարժարանի բացման տարին ներկայ ըլլայի հանդիսութեանց եւ անկէ տարի մը ետք, յատուկ հրաւէրով, բանախօսելու առիթը կ՛ունենայի աշակերտութեան, որոնցմէ շատեր իմ աշակերտներն էին որոնք երկրորդական բաժինը պիտի աւարտէին: Առիթով մըն ալ շրջանաւարտից հանդիսութեան նախագահեցի փոխան Առաջնորդ Սրբազան Հօր, ու իմ ձեռքով նախկին աշակերտներուս շրջանաւարտի վկայականները յանձնեցի:*

*Այս բոլորը կը յիշատակեմ ի պատիւ վարժարանին ու իր տասնամեայ վաստակին, չենք ուզեր մոռնալ կատարուած շնորհակալ գործը, ժխտականը դրականին վրայ չէ որ պիտի ազդէ, այլ ընդհակառակը, կատարուած գործը պիտի խթանէ ու քաջալերէ, փոխանակ լսելի դարձնելու վարժարանի մը փակման անհանդուրժելի լուրը: Կրկին անգամ իմ մանկութենէս ի վեր խոնարհած մեծանուն ՀԲԸ Միութեան վաստակին առջեւ, այս անգամ արդէն տարեց հոգեւորական, հարց կուտամ մերօրեայ Բարեգործականի ղեկավարներուն ինչո՞ւ ընտրել դիւրին ճամբան: Աւետարանի ճամբան դժուար ճամբան է զոր պէտք է ընտրենք, նուիրումի ճամբան: Որպէս դարման հեռաւոր միւս դպրոցին միացումը կը ճշդուի, կարծելով ու հաւատացնելով որ հարիւրէն մէկը միայն թերեւս փրկուի եւ մնացեալները օտարութեան մատնուին:*

*Անպաշտօն ներկայ գրութիւնս չեմ համարձակիր յանուն Հայ Եկեղեցւոյ ուղղել համեստ հոգեւորականի հանգամանքովս: Թող խօսին աւելի պատասխանատու անձինք եւ թող Տիրոջ ողորմութեամբ վերաքննուի առնուած որոշումը յանուն հայ դպրութեան: Վերջապէս սփիւռքի ամենահոծ հայ համայնքը ճիշդ հոս է եւ ոչ այլուր:*

**www.massispost.com**
**Daily News Updated**

# Տխուր Որոշում

ՄԻՔԱՅԵԼ ԵՈՒՍՈՒՖԵԱՆ

*Ասկէ տարիներ առաջ, տեղեկացայ որ Բարեգործականը Փասատինայի մէջ Երկրորդական Վարժարան մը պիտի բանայ:*

*Առիթը չփախցուցի իմ սիրայօժար մասնակցութիւնս բերելու որպէս ճարտարապետ, որպէսզի պէտք եղած նորոգութիւնները կատարուին եւ առանց ժամանակ կորսնցնելու այդ ծառայութիւնը ընեմ:*

*Եւ դպրոցը իր դռները բացաւ, ուսումի եւ մշակոյթի սիրահար սերունդի առջեւ:*

*Իմ ուրախութիւնս չափ ու սահման չունէր:*

*Կրնայի երեւակայել թէ ինչպէս հայ պատանի-պատանուհիներ այդ դպրոցի սեմէն ներս պիտի մտնէին եւ իրենց նախնիքներու հարուստ ժառանգութեան տիրանային:*

*Թէ՛ հոգաբարձութիւնը, թէ՛ տնօրէնն ու ուսուցչական կազմը մեծ խանդավառութեան մէջ էին:*

*Ճիշդ է թէ միլիոնատէր բարերար չկար այդ դպրոցի նիւթականը հոգալու համար եւ սակայն կար Հայկական Բարեգործական Կազմակերպութիւնը՝ որուն առաքելութիւնն էր հայը հայ պահել այս օտար ափերուն վրան:*

*Այդ դպրոցը սկսելէն առաջ, ես, ներշնչեցի եւ հաւաքեցի խումբ մը հայորդիներ որոնց հետ հիմնեցինք Սահակ Մեսրոպ Հայ Քրիստոնեայ Վարժարանը:*

*Դպրոցը սկսելու համար պէտք եղած դրամագլուխը չունէինք: Ես, անձամբ, իմ խնայողութենէս 10,000 տոլար տրամադրեցի եւ անսահման հաւատքով դպրոցը սկսանք, յետոյ կալուածի տէր դարձանք, սրահ ու դասասենեակներ կառուցեցինք եւ 300-է աւելի հայ մանուկ-պատանիներ տարիներով ազգային եւ քրիստոնէական կրթութիւն ստացան, մանկապարտէզէն մինչեւ 8-րդ կարգերու մէջ:*

*Տարին 1980 թուականն էր:*

*Անցեալները լուր տարածուեցաւ որ Փասատինայի մէջ հիմնուած Վաչէ Մանուկեան Հայ Վարժարանը իր դռները կը գոցէ հայ նոր սերունդին առջեւ: Կը նշանակէ որ մեր զաւակները օտար վարժարաններ պիտի յաճախեն իրենց ինքնութիւնը կորսնցնելու համար, օտար աշակերտներու հետ բարեկամանան եւ օր մըն ալ զանազանութիւն չդնեն հայ եւ խառնուրդ ընտանիք կազմելու ատեն:*

*Կ՛ուզենք հարցնել Բարեգործական հարուստ Կազմակերպութեան՝ եթէ ա՛յս է իրենց ծրագիրը մեր ապագայ սերունդներուն համար, եթէ այս էր փափաքը Բարեգործականի տարիներու առաջնորդ, հրաշալի հայ Ալեքս Մանուկեանի:*

*Միլիոնաւոր տոլարներ կը հաւաքուին առաջնորդարաններ եւ ակումբներ շինելու համար, չե՞ն կրնար այդ գումարներուն մէկ տասանորդը տրամադրել որ հայ դպրոցի մը դռները բաց մնան մեր զաւակներուն առջեւ:*

*Ա՛յս է կոչը Մեսրոպի, Շնորհալիի, Վարդանի, Կոմիտասի, որոնք ապրեցան ու մեռան ապագայի լուսաւոր ժառանգ մը ձգելով մեր ազգին:*

*Օրհնեալ են անոնք որ հայկական վարժարաններ կը հիմնեն եւ անոնց գոյութիւնը կ՛ապահովեն:*

*Ի՞նչ պէտք է ըսել անո՛նց, որոնք դրամի մէջ կը լողան եւ արդէն ապրող հայ վարժարանի մը դուռը կը փակեն: Երբեք թող չջանան մեզ համոզել որ այդ գոցուող վարժարանի ուսանողները ինքնաշարժով ուրիշ քոյր վարժարաններ պիտի փոխադրուին:*

*Որչա՜փ տկարամիտ պէտք է*

Շար.ը էջ 17

**Նախաձեռնութեամբ՝ ՆՈՐ ՕՐ շաբաթաթերթի**

**Մասնակցութեամբ՝ ԱՍՊԱՐԷԶ, ՄԱՍԻՍ թերթերու**

***ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ***

**Ներկայ Հայաստանի յետ-թաւշեայ յեղափոխութեան արտաքին եւ ներքին քաղաքականութիւնը, ժողովրդավարութիւնը, տնտեսութիւնը եւ ռազմաքաղաքական իրավիճակը**

**Կը ներկայացնեն՝**
**ՓԱՆՈՍ ԹԻԹԻԶԵԱՆ**
**ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ**
**ԺԱՆ ԳՈՍԱԳԵԱՆ**

**Կը համադրէ՝**
**Իրաւաբան ԿԱՐՕ ՂԱԶԱՐԵԱՆ**

**ԵՐԵՔՇԱԲԹԻ, 19 ՆՈՅԵՄԲԵՐ 2019, ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 7:30-ԻՆ,**
**ԿԼԵՆՏԷՅԼԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՍՐԱՀԻՆ ՄԷՋ,**
**222 E Harvard St, Glendale, CA 91205**

*Հիւրասիրութիւն*



# Շտապեցէ՛ք. Մի՛ Ուշանաք. Շտապեցէ՛ք

ԱՒԵՏԻՍ ՌԱԶՄԻԿ

*Իրօք, բախտաւոր օրերու մէջ են մեր արեւելահայ զարմիկներն ու զարմուհիները: Պէտք է խայտան օրն ի բուն: Նախանձը կը գրգռէ իրենց հանդէպ: Երանելի՜ են փաստօրէն:*

*Այս անօրինակ մտորումը ունեցայ, երբ Դիմատեորին էջերը քրքրելու ընթացքին, դիմացս յայտնուեցաւ հրապուրիչ ծանուցում մը: **ԱՄՆ**-ի գաղթականութեան պետական բաժանմունքը, Երեւանի իր գրասենեակին միջոցաւ կը յայտնէ, թէ **ԱՄՆ** ներգաղթելու «Green Card»-ի վիճակաձգութեան վերջին ժամկէտը Նոյեմբեր 5-ն է: Ան կը հրաւիրէ հայրենի մեր ժողովուրդը դիմելու այս բարեբաստիկ հնարաւորութեան եւ ինչու չէ, յաջողութեան պարագային, կրնան ձեռք ձգել այնքա՜ն բաղձալի «Green Card»-ը:*

*Ծ. բացառիկ հնարաւորութիւն:*

*Հայրենիքը հայաթափող այս գրասենեակը խիստ բարեացակամ է, ծառայասէր իր «առաքելութեան» մէջ, տրամադիր՝ առաւելագոյնս օժանդակելու դիմորդները, որովհետեւ՝ կ'աշխատի Շաբաթ եւ Կիրակի օրերը՝ առաւօտեան ժամը 10-էն երեկոյեան 6-ը: Հասցէն՝ Բուզանդի փողոց, Երեւանի կեդրոնական մասին մէջ, խնայելով շատերու փոխադրութեան տաղտուկը:*

*Ի դէպ, տարբեր միջոցներով պրպտելու ալ պէտք չկայ իմանալու համար փրկարար «Green Card»-ը շահելու հասցէն եւ ձեւակերպումները, քանի Երեւանի տարբեր վայրերու մէջ կարելի է գտնել անոր մեծկակ, շլացնող, աչք ծակող ծանուցումները: Ազատ են մարդիկ: Հայրենիքը կրծող այս վարակը անարգել կը գործէ, կամ կ'աւերէ՝ ինչպէս որ կ'ուզէ:*

*Սարսուռ կը պատճառեն պաշտօնական այն թիւերը, որոնք սփռուած են **ԱՄՆ**-ի պետական գրասենեակէն: Արդարեւ, 2018-ին «Green Card»-ի խաղարկութեան դիմած են 110 հազար 725 քաղաքացի: Ասոնք դիմողներն են, որ իրենց տիկիններով ու զաւակներով կը հաշուէ 267 հազար 67 հայաստանցի (156 հազար 342-ը ընտանիքի անդամներ): 2018-ին դիմողները բաղդատած 2017-ի դիմողներուն, աւելի են 14 հազար 336 քաղաքացիներով: 2017-ին վիճակախաղին մասնակցած են 96 հազար 389 քաղաքացի (ընտանիքներով՝ 226 հազար 545 մարդ): Իսկ 2016-ին՝ գրանցուած է 71 հազար 854 դիմորդ (ընտանիքներով՝ 168 հազար 115 քաղաքացի): Ըստ նոյն աղբիւրին, 2018-ին շահած են 2844 «բախտաւորներ», 2017-ին՝ 1669 «երջանիկներ», 2016-ին՝ 1277 «երանելիներ»:*

*Պարզօրէն կ'երեւի, թէ տարուէ տարի, երազային «Green Card»-ը առաւել կը հրապուրէ աւելի մեծ թիւով արեւելահայ զանգուածներ: Եւ ըստ վերջին լուրերուն, հերթեր գոյացած են անոր գրասենեակին առջեւ: Ուրեմն՝ շտապեցէ՛ք, մի՛ ուշանաք, փորձեցէ՛ք ձեր բախտը, եթէ ոչ այս տարի, գոնէ յաջորդ տարի: Շտապեցէ՛ք, մի՛ ուշանաք: Շտապեցէ՛ք:*

*2014-ին, Երեւանի մէջ ծանօթացուցին հայորդիի մը, որպէս հայրենասէր: 2015-ին, երբ հարցուցի այդ նոր ծանօթին մասին, պատասխանեցին՝ «**ԱՄՆ** է գնացել: «Green Card» էր շահել»:*

*Մխիթարական կէտ մը պէտք է նշենք հոս. հայրենալքումի մերօրեայ ասպետները, երբ **ԱՄՆ** կը հասնին, ի հարկէ չեն մոռնար Ապրիլ 24-ի երթին մասնակցութիւնը: Կը մնան պահանջատէր, հողեր կ'ուզեն Թուրքիայէն, կը սպառնան ջախջախել Թուրքիան եւ անոր վերնախաւը: Չեն մոռնար հայկական ազգային աւանդոյթները՝ իրենց անգլիախօս զաւակներով, մեքսիքացի, սեւամորթ կամ չիլիցի հարս ու փեսաներով: Պէտք ըլլայ՝ Արցախի հայկականութիւնը հաստատող պաստառներ բարձրացնելով: Հայրենիքէն փախածներ շատ կը սիրեն հայրենիքը: Հեռուներէն ի՜նչ քաղցր է հողն ու անոր միրգը:*




*Դէպի «Green Card»-ի գրասենեակներ շտապող մարդոց հեւքին երեւոյթը ի՞նչ է, եթէ ոչ՝ սպիտակ ջարդ: Ժամանակին սփիւռքահայութիւնը վտանգուած էր այս անարիւն եաթաղանով, դուն մի ըսեր՝ արեւելահայ հայրենաբնակները աւելի եւս տրամադիր են անձնատուր ըլլալու այս հայակուլ վտանգին: Այն ալ՝ ազատ, անկախ, հպարտ, յաղթանակած Հայաստանի առկայութեան ի տես: Երեւի տարինե՛ր սպասած են անկախութեան՝ անկախօրէն սպրդելու համար՝ աստ եւ անդ:*

*Հոսքը միայն «Green Card»-ի ուղղութեամբ չէ: Երանի այդպէս ըլլար: Նոյն թափով մարդիկ կը փութան Ռուսաստանի տափաստաններ, Միջին Ասիոյ աւազուտքներ, Սիպերիոյ ու Սախալինի սառցադաշտեր: Ժամանակին, Հայաստանէն մարդիկ բռնի կերպով Սիպերիա կ'աքսորուէին, արցունքոտ աչքերով կը հեռանային, տառապանքի ու մահուան զարհուրով շղթայակապ կ'ուղղուէին: Իսկ հիմա, ուրախութեան արցունքներով կը հեռանան Սիպերիա եւ կը յայտարարեն՝ «էնտեղ աշխատանք կայ, փող կայ, լաւ ենք ապրում, էլի». անշուշտ հայերէնին անծանօթ իրենց զաւակներուն առջեւ այսպէս ըսելով: Երջանկութեան արցունքներ, որոնք պիտի ձուլեն ազգը համօրէն: Եւ զարմանալի, ամերիկաշունչ գրասենեակներու հերթերուն նմանատիպ հերթեր կան, այս անգամ Ռուսաստան աշխատանքի մեկնելու: Շտապեցէ՛ք, մի՛ ուշանաք: Շտապեցէ՛ք:*

*2014-ին, ազերիական հետախուզական ուժերուն հերթական ներթափանցումը սանձելու ընթացքին նահատակուեցաւ երիտասարդ զինուոր Արարատ Խանոյեան: Անոր քոյրը Ժաննան օր մը, Դիմատեորի էջերէն յուզականօրէն հարց կու տար. «դուք թողնում, գնում էք Հայաստանից: Բա իմ ապերը ինչո՞ւ, ո՞ւմ համար նահատակուեց, կեանքի գնով պաշտպանեց հայրենիքը»: Սգաւոր Ժաննային սրտաուչ ապրումը տեղին չէ՞:*

*Ապրիլ 24-ի հերթական քայլարշաւին ի՞նչ տեսնեմ, շուրջս բոլոր հայրենիքը լքած հայորդիներ: Հող կ'ուզեն, արդարութիւն կը պահանջեն: Եւ ահա Կապանէն Նիկոսիա փախած հայուհին, իր յունացած զաւակներով Արեւմտեան Հայաստանի տարածքները կը պահանջէ: Հանելուկ: Հայկական հանելուկ:*

*Բարեբախտաբար, կայ նաեւ այլ հոսանք մը: Սփոփիչ մթնոլորտ մը: Կը կարդանք որ Երեւանի մէջ բացուած է գրասենեակ մը, հայրենադարձ հայոց առաջնային եւ կենսական հարցերուն ուղղութիւն ցոյց տալու համար. սատարելու հայրենադարձութեան շարժումին, յատկապէս՝ Սուրիայէն, Իրաքէն, Լիբանանէն, Պոլիսէն հայրենահաստատ ընտանիքներուն: Ուրեմն՝ ականատես ենք հակընթաց հոսանքներու՝ արեւելահայերու փախուստ հողէն, սփիւռքահայերու վերադարձ դէպի հայրենիք:*

*Հետաքրքրական մասունք մը Խրիմեան Հայրիկէն: 1898-ին, Հայոց Հայրիկը նկատի առնելով հայութեան բազմացումը **ԱՄՆ**-ի մէջ եւ ընդառաջելով տեղւոյն հայութեան խնդրանքին, առաջին առաջնորդ սրբազանը կը ղրկէ **ԱՄՆ** եւ կը հրապարակէ կոնդակ մը այս առիթով: Այդ շրջանին հայութիւնը նորակազմ գաղութին մէջ կը հաշուէր 15 հազար հայ: Գիրքը որուն մէջ կը գտնուի կոնդակին պատճէնը, լոյս տեսած է 1945-ին, ուր կը նշուի, որ հայութեան թիւը արդէն դարձած է 125 հազարէն աւելի: Կոնդակին մէջ, Խրիմեանի ծանօթ սրտազեղ ոճով գրուած, կը կարդանք. «Թող Նոր աշխարհի կեանքը՝ իր ամէն շքեղութիւններով եւ փայլերով զձեզ չհրապուրէ. յիշեցէ՛ք, որ դուք պանդուխտ էք այդ օտար երկրում. յիշեցէ՛ք որ մի օր Իսրայէլի նման Տէր Աստուած զձեզ պիտի հանէ այդ պանդխտութեան աշխարհէն՝ դէպի ձեր հայրենի երկիրը. յիշեցէ՛ք որ օտարը միշտ օտար է»:*

*Հէ՜գ ու բարեմիտ Խրիմեան: Ի՞նչ իմանար որ 120 տարի ետք հայութիւնը ոչ թէ հայրենիք պիտի վերադառնար, այլ հայրենիքէն ու Միջին Արեւելքէն հարիւր հազարաւորներով պիտի շտապէին **ԱՄՆ**՝ 15 հազարէն հասնելով աւելի քան մէկ ու կէս միլիոնի: Եւ այն ալ*

Շար.ը էջ 19

Dignity MEMORIAL

Monrovia-ի Dignity գերեզմանատան մէջ
պիտի տրամադրուի յատուկ Հայկական բաժին մը
որուն անունը պիտի ըլլայ Արարատ:

**Շատ լաւ պայմաններով եւ յարմար ամսական վճարումներով:**

Նախքան Ձեր ծրագիրներուն ու առաւելութիւններուն համար Ձեզի կառաչարկուի՝

1. Ձեր պայմաններուն եւ ծախսերու համար ծառայութիւններ
2. Ունինք նաեւ թաղման ու յուղարկաւորութեան ծառայութիւններ յարմար գիներով

Մանրամասնութեան համար դիմէլ՝

ISABEL CRISTINA KEMANIAN
*Pre-Planning Advisor*



200 E. Duarte Rd., Monrovia, CA 91016
(818) 284-8754
Email: isabel.kemanian@sci-us.com

# Նոր Հրատարակութիւն. Յորդանանի Հայերը

ԱՐԱՔՍ ՓԱՇԱՅԵԱՆ
ՀՀ Գիտութիւնների Ազգային Ակադեմիա, Արեւելագիտութեան Ինստիտուտ




*Օրերս Հայկազեան Համալսարանի Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութիւնների կեդրոնը հրատարակեց «Յորդանանի Հայերը» վերտառութեամբ հերթական հատորը (519 էջ), որտեղ ամփոփուած են նոյն խորագրով 2016 Մայիսի 22-24-ը Պէյրութում անցկացուած գիտաժողովի նիւթերը: Նշենք, որ Հայկազեան Համալսարանն արդէն մի քանի տարի է, ինչ նախաձեռնել է Սփիւռքի հայ համայնքներին վերաբերող եւ շարունակական բնոյթ կրող գիտաժողովների շարք, որոնց նիւթերը յետագայում հրատարակւում են:*

*Ներկայ հատորի մէջ տեղ են գտել Փրոֆ. Հինտ Ապու Շաարի «Յորդանանի պատմութիւնը օսմանեան եւ անկախութեան շրջանում 1850-1946», Փրոֆ. Քլոտ Մութաֆեանի «Հայկական աւանները Յորդանանում 12-14-րդ դդ.», Դոկտ. Հիլմար Քայ գէ րի «Հայ տեղահանուածները Հաուրանում եւ Քարաքում Հայոց Ցեղասպանութեան շրջանում»), Դոկտ. Ճոն Արմաճանիի «Յոր դանանի սահմանադրութիւնը եւ փոքրամասնութիւնների իրաւունքները», Դոկտ. Անդրանիկ Տագէսեանի «Փոքրապատում ՀԲԸՄ Ամմանի (1929-1955), Ռուսէյֆայի (1939-61), Զարքայի (1941-59) եւ Քարաքի (1941-46) մասնաճիւղերուն», նաեւ՝ «Ժողովրդագրական քաղուածքներ Ամմանի Ս. Թադէոս եկեղեցիի պսակի, մկրտութեան եւ մահուան տոմարներէն 1922-2013»), Դոկտ. Աննա Օհաննէսեան-Շարփէնի «Հայ կանանց ժառանգ ները Հարաւային Յորդանանում», Ալին Պէնէեանի «Հայերը Յորդանանի հիւսիսում եւ հարաւում»), Սիլվա Պաղսարեան-Մենեքշեանի «ՀՄԸՄ Ամման. մեկուսի մասնաճիւղ», Յակոբ Սերփէքեանի «Ռուսէյֆայի հայերը», Գէորգ Մսրլեանի «Հայերի ներգաղթը Յորդանանում եւ քաղաքացիութեան ձեռքբերումը 1928-1954», նաեւ՝ «Իրպիտի եւ Հիւսիսային Յորդանանի հայե րը», Եղիա Թաշճեանի «Թագաւորների լուսանկարիչը. Յակոբ Պէրպէրեանի կենսագրութիւնը», Սիլվա Սարգսեան-Հայրա պետեանի «Հայ համայնքի ձեւաւորումը Ամմանում», Ռոզէթ Ալեմ եան- Մահսերէճեանի «Յորդանանի ազգային մարզական միու թիւնը», Արսինէ Ճամպազեանի «Յորդանանի*

*Հայ Օգնութեան Միու թեան «Արագ» մասնաճիւղը», Ներսէս Ներսէսեանի «Յորդանանի հայ գաղութի դէմքեր եւ Յորդանանի հայկական եկեղեցիները», Հրածին Վարդանեանի «Սփիւռքահայութեան Հետ Մշակութային Կապի Կոմիտէն եւ Յորդանանահայութիւնը 1964-1990», Մատ լէն Մեծակոբեանի «Յորդանանի հայերը համարկման եւ Մայր հայրենիքի հետ կապի միջեւ», Վիգէն Ասլանեանի «Յորդանանի հայերի մասնակցութիւնը հասարակական կեանքում», Դոկտ. Լուսին Թամինեանի «Սփիւռքահայ կնոջ ինքնութեան ձեւաւո րումը», Դոկտ. Արաքս Փաշայեանի «Յորդանանի հայ համայն քը. արդի հիմնախնդիրներ», Դոկտ. Վահրամ Շեմմասեանի «Հայոց Ցեղասպանութեան վերապրողները Պաղեստինում եւ Անդր յորդանանում առաջին աշխարհամարտի վերջին»), Մա րալ Նէր սիսեանի «Յորդանանի հայ կրթօճախները»), Պերճ Ճամ պազ եանի «Յիշողութիւններ Յորդանանի հայ աւետարանական հա մայնքի մասին», Յարութ Ջեքիճեանի «Հորդանանի հայերը. լու շեր, դրուագներ 1967-1978»), Հերի Յակոբեանի «Հայ ընտանիք. յաւերժական ճամբորդութիւն» յօդուածները:*

*Հատորի վերջում «Յաւելուած» բաժինն է, որտեղ կան արժէքաւոր փաստեր համայնքի ազգային, կրթական, ժողովրդագրական, մարզական եւ այլ ոլորտների մասին: Այստեղ տեղ է գտել ամմանահայ գրող Թադէոս Եսայեանի «Կեանքս ինչպէս որ էր» նոթագրութիւնը: Նշուած բաժնում կան տեղեկութիւններ նաեւ հեղինակների մասին: Կայ կարճ տեղեկատուութիւն գիտաժողովի մասին (զետեղուած են գիտաժողովի բացման եւ փակման խօսքերը, նաեւ՝ Գալուստ Կիւլպենկեան Հիմնարկի հայկական համայնքների բաժնի տնօրէն Դոկտ. Ռազմիկ Փանոսեանի ողջոյնի խօսքը): Գիտաժողովի կազմակերպիչներն իրենց երախտագիտութիւնն են յայտնել Պրն. Երջօ Սամուէլեանին, ինչպէս նաեւ Գալուստ Կիւլպենկեան հիմնարկին՝ աջակցութեան համար:*

*Նշենք, որ հանդիսութեանը յաջորդել է յորդանանահայ լուսանկարիչ Միրօ Գիզիրեանի լուսանկարչական ցուցահանդէսը:*

*Հայկազեան Համալսարանի ռեկտորը նշել է, որ չնայած հայապահպանութեան եւ այլ ոլորտներում նկատուող որոշակի բացասական միտումներին, պէտք է փորձել հասկանալ, թէ ստեղծուած իրավիճակում, ի սպաս հայ համայնքների, ինչ շահեկան լուծումներ կարելի է գտնել: Իր հերթին, Դոկտ. Անդրանիկ Տագէսեանը նկատում է, որ Միջին Արեւելքում հայապահպանութեան համար ներկայումս բաւական լուրջ մարտահրաւէրներ են ձեւաւորուել, սակայն մինչ օրս Հայաստանի Հանրապետութիւնը յստակ քաղաքականութիւն, առաւել եւս ռազմավարութիւն նմանօրինակ խնդիրների հետ կապուած՝ չունի: Ըստ այդմ՝ հաշուի առնելով տարածաշրջանում հայ համայնքների մշուշոտ հեռանկարը, ճիշդ կը լինէր, եթէ Հայաստանի Հանրապետութիւնը գործնական քայլեր ձեռնարկէր այդ ուղղութեամբ:*

*Հատորի մէջ զետեղուած են Յորդանանի հայ համայնքի տարբեր փուլերին ու համայնքային կեանքին վերաբերող տասնեակ լուսանկարներ, որոնք ունեն բացառիկ վաւերագրական նշանակութիւն: Նշենք, որ հատորում տեղ գտած բոլոր յօդուածներն արժէքաւոր են եւ աչքի են ընկնում գիտական կարեւորութեամբ՝ ընդգրկելով համայնքի պատմութեան տարբեր ժամանակահատուածներ ու իրար չկրկնող, տարաբնոյթ խնդիրներ: Դրանցից շատերը հիմնուած են արխիւային նիւթերի, դաշտային հետազօտութիւնների, սեփական ընտանիքների ու անձնական պատմութիւնների վրայ: Հատորում զետեղուած նիւթերն ու յօդուածները խիստ կարեւոր նշանակութիւն ունեն Հայոց Ցեղասպանութիւնից եւ Կիլիկիայի հայաթափումից յետոյ ձեւաւորուած*

*Յորդանանի հայ համայնքի ստեղծած նիւթական, հոգեւոր եւ ազգային մշակոյթի ուսումնասիրութեան ոլորտում: Հատորում ներկայացուած են դէպի Յորդանան հայերի գաղթի ուղիները, առաջին գաղթակայանները, հայ աղջիկների՝ պետուիների հետ ամուսնանալու պատմութիւնները, Յորդանանում հայ համայնքի կայացման ամբողջ պատմութիւնը, հայաշատ քաղաքները, որոնք յետագայում կորցրեցին իրենց նշանակութիւնը, մի խօսքով՝ հայ համայնքի հաստատութենականացման գործընթացը: Ներկայացուած են նաեւ Յորդանանում երեւելի հայերի գործունէութիւնը, հայերի ներդրումը Յորդանանի հասարակական, ընկերատնտեսական, մշակութային կեանքում եւ այլեւայլ ոլորտներում: Քննարկման առարկայ են դարձել նաեւ հայ համայնք-պետութիւն յարաբերութիւնները, Յորդանանում փոքրամասնութիւնների կարգավիճակը: Առանձին յօդուածներում լուսաբանւում են Յորդանանում հայկական ինքնութեան խնդիրները, Յորդանանի հայ համայնքի անցեալի եւ ներկայի մարտահրաւէրները, Հայաստանի դերը յորդանանահայ համայնքին հայապահպանութեան խնդիրներում օգնելու հարցում:*

*Հարկ է նկատի ունենալ, որ հատորն ունի բացառիկ կարեւոր աղբիւրագիտական նշանակութիւն, նոյնիսկ՝ հանրագիտարանային արժէք, քանի որ մինչ օրս Յորդանանի հայ համայնքի վերաբերեալ խորքային ուսումնասիրութիւններ չկային: Համայնքի ամբողջական եւ բազմակողմ պատմութիւնը, կարելի է ասել, կարօտ էր հետազօտութեան: Հատորը նոր լոյս է սփռում յորդանանահայերի նոր, նորագոյն եւ շրջանի խնդիրներին՝ առանձնացնելով այն մարտահրաւէրները, որոնց ներկայումս բախւում է համայնքը:*

*Նշենք, որ Յորդանանում այժմ ապրում են մօտ 3000 հայեր: Յորդանանի հայ համայնքը Սփիւռքի աւանդական համայնքներից է, ունի իր ներքին ենթակառուցուածքները: Համայնքը կազմուած է ընկերային եւ դաւանական տարբեր շերտերից: Ճանրակշիռ հատուածը Հայ Առաքելական Եկեղեցու հետեւորդներն են, աւելի փոքր մաս են կազմում հայ կաթոլիկները: Կայ երեք եկեղեցի՝ առաքելական ուղղուածութեամբ երկու՝ Ս. Թադէոս, Ս. Կարապետ եւ մէկ կաթողիկէ: Ս. Թադէոս եկեղեցու շրջանակներում գործում է վեցամեայ Իսգպաշեան-Կիւլպենկեան վարժարանը: Յորդանանի հայերն այդ երկրի լիիրաւ քաղաքացիներ են, ազատօրէն դաւանում են սեփական կրօնը՝ վայելելով թէ՛ Հաշիմեան իշխող թագաւորական ընտանիքի եւ թէ՛ հասարակութեան համակրանքն ու աջակցութիւնը: Հայերը լաւ համարում ունեն՝ որպէս երկրի նուիրեալ քաղաքացիներ:*

Շար.ը էջ 19

ՇՆՈՐՀԱՆԴԷՍ
Նուիրուած՝
ԲԺ. ՎԱՐԴԱՆ ԹԱՇՃԵԱՆԻ
ՆՈՐԱՏԻՊ ՀԱՏՈՐԻՆ
Հովանաւորութեամբ՝
Նոր Սերունդ,
Համազգային և Թէքէեան
Մշակութային Միութիւններու
Ինչպէս նաեւ
Ամերիկահայ
Բժշկական Միութեան




__ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ __
Կիրակի, 17 Նոյեմբեր, 2019, կ. ե. ժամը 3-ին,
Հայ Կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ
«Գույումճեան» սրահ,_ 1510 East Mountain, Glendale
Մուտքը ազատ
Հիւրասիրութիւն

## Կին, Որ Կ'ուզէ Իր Հետ Արքայադստեր Նման Վարուին

Կանանց ո՞ր տեսակներուն հետ երբեք կարելի չէ հանդիպիլ

1) Հարստութիւն փնտռող: Այդպիսի կինը կը նախընտրէ հանդիպիլ այնպիսի տղամարդու հետ, որ դրամ ունի: Ասիկա պարզապէս կը նշանակէ, որ ան կ'ուզէ նիւթապէս ապահովուած տղամարդու հետ ըլլալ:

2) Տրամայի թագուհի: Այսպիսի կինը մժեղը կրնայ փիղի վերածել: Ան պատրաստ է մեծ աղմուկ բարձրացնելու, միայն թէ ստանայ ա՛յն, ինչ կ'ուզէ: Եւ ան կը փորձէ տղամարդու մէջ մեղքի զգացում յառաջացնել, որպէսզի վերջինս փրկէ զինք:

3) Արքայադուստր: Այս կինը նոյնքան սուղ ճաշակ ունի, որքան հարստութիւն փնտռող կինը, բայց անոր համար պարտադիր չէ տղամարդու դրամը իրը դարձնելը: Ան կ'ուզէ, որ իր հետ վարուին արքայավայել, կը պնդէ, որ ամէն ինչ ըլլայ այնպէս, ինչպէս ինք կ'ուզէ: Երեւս առած է ու չ'ամչնար, կը սպասէ միայն լաւագոյնին:

4) Կախուած է քեզմէ:

Ինչո՞ւ ան ընէ որեւէ բան ինքնուրոյն, եթէ կրնայ քեզմէ խնդրել ատիկա ընել: Ան ինքզինք միշտ կը ներկայացնէ իբրեւ զոհ եւ կը սպասէ, որ դուն ամէն բան ընես իր փոխարէն: Վատագոյնը այն է, որ, երբ դուն կը մերժես, ան կը բողոքէ, որ դուն բաւականաչափ չես սիրեր զինք:

5) Սղոց: Ան կը մտածէ, որ քեզի կառուցողական քննադատութեան կ'ենթարկէ, բայց իրականութեան մէջ պարզապէս կը բողոքէ: Եւ պարտադիր չէ, որ այդ բողոքը ուղղուած ըլլայ քու եւ ձեր յարաբերութիւններուն դէմ: Ան կրնայ պարզապէս բողոքել ամէն ինչէ ու բացասական տարածել:

6) Իգականութիւն: Ի՞նչպէս համարձակած ես անոր առջեւ դուռը բանալ կամ աթոռ առաջարկել: Դուն կը մտածես, որ ինքը այնքան տկա՞ր է, որ չի կրնար ատիկա ինքնուրոյն ընել: Ան կը փորձէ ապացուցել, որ կանանց հետ պէտք է վերաբեր ուիլ նոյն կերպ, ինչպէս՝ տղամարդոց:

7) Գետնառիւծ: Քեզի հաճելի թուելու համար ան կը սկսի կրկնել այն ամէնը, ինչ դուն կ'ընես: Ան կրնայ պատճէնել հետաքրքրութիւններդ, քանի որ չունի սեփական անձի զգացողութիւն: Ան ամէն ինչի համաձայն կ'ըլլայ ու կ'ընէ այն ամէնը, ինչ դուն կ'ըսես: Ան իր սեփական կարծիքը չ'ունենար ու նոյնիսկ չ'ունենար սեփական նախապատուութիւնները:

8) Երազող կին: Այս տեսակ կինը կ'ապրի իր երազներու աշխարհին մէջ: Ան կը տեսնէ ա՛յն, ինչ կ'ուզէ տեսնել, ու կը լսէ ա՛յն, ինչ կ'ուզէ լսել: Ան ընտրողական վերաբերմունք կը ցուցաբերէ այդ առումով ու կրնայ անտեսել ա՛յն, ինչի հետ չ'ուզեր գործ ունենալ առհասարակ:

9) Օդերը փակող: Ան կ'ուզէ գիտնալ այն ամէնը, ինչ տեղի կ'ունենայ քեզի հետ: Ան կպչուն է, իշխող, չի կրնար անտեղեակ ըլլալ քու կեանքիդ մէջ կատարուող որեւէ իրադարձութենէ: Ան միշտ կը սպասէ, որ դուն պարտադիր պիտի պատասխանես անոր հաղորդագրութիւններուն, չ'ընդունիր մերժումը՝ իբրեւ հանդիպման առաջարկի պատասխան: Ան ահաւոր կը վախնայ, որ դուն պիտի հեռանաս իրմէ:

10) Հանելուկ: Այս տեսակի կինը իր մասին շատ բան չի պատմեր: Սկզբնական շրջանին անոր ընտրած տարբերակը հետաքրքրական է, բայց եթէ այդպէս երկար շարունակուի, հարց պիտի յառաջանայ, թէ ինչո՞ւ:

Հաւանաբար դուն երբեք ալ չես գիտնար, քանի որ ան այդպիսին է ու պատրաստ չէ իսկական յարաբերութիւններու:

## Ինչո՞վ Կը Վախցնեն 30-ը Անց Կանանց

Ի՞նչ կը սպասէ այն կանանց, որոնք մշտական ընկեր չունին «յարաբերութիւններու համար», բայց ունին տուն եւ հանապազօրեայ հաց վաստակելու հնարաւորութիւն: Փորձենք թուարկել բոլոր «սարսափները»:

Լուրջ յարաբերութիւններու բացակայութիւնը հետեւեալն է.

- Գրեթէ ամէն շաբաթ նոր երկրպագուի հետ սրճարան կամ շարժանկարի երթալու հնարաւորութիւն,

- Անձնական ժամանակը ուզածին պէս տնօրինելու ազատութիւն: Պէտք չէ ոեւէ մէկուն բացատրել, թէ չորս ժամ ինչ կ'ընէիր վարսայարդարի մօտ,

- Կենցաղային պարտականութիւններէ լիարժէք ազատութիւն,

- Երեխաներու մասին հարցի բացակայութիւն, որ շատ կարեւոր է, եթէ արդէն երեխաներ ունիս,

- Ոչ ոք կը խռմփացնէ սենեակիդ մէջ,

- Արձակուրդը, Ամանորը, հանգստեան օրերը ծրագրելու լիարժէք ազատութիւն,

- Տան մէջ քեզի համար տհաճ մարդոց կամ կպչուն հիւրերու բացակայութիւն,

- Ջղային համակարգի լիակատար հանգստութիւն. ոչ ոքի պէտք է նախանձիլ կամ սպասել՝ մինչեւ վերադառնայ որեւէ հանդիպումէ,

- Զափազանց շատ ազատ ժամանակ,

- Գայթակղիչ առաջարկներ տղամարդոցմէ, որոնց յարաբերութիւններ պէտք չեն,

- Աւելի շատ ուշադրութիւն որեւէ երեկոյթի ժամանակ,

-Խորեւառողջ քունամբողջ գիշեր:

## Տխուր Որոշում

Շարունակուած էջ 14-էն

ըլլայ հայ ծնողք մը որ այդ տեսակ անտրամաբանական լուծումներու հաւատայ:

Հայ դպրոցը չի գոցուիր, ընդհակառակը անոր թիւը պէտք է բազմապատկուի սփիւռքի այս վատառողջ մթնոլորտին մէջ:

Ապագայ սերունդները պիտի օրհնեն զանոնք որ կը քաջալերեն հայ դպրոցը եւ պիտի պախարակեն զանոնք, որ իրենց շահերը հետապնդելով հայ նոր սերունդը կը զրկեն եւ կը հեռացնեն իրենց արմատներէն:

Մեր առաջարկը դպրոցի վերակացուներուն ա՛յս է.

Բաց պահեցէք Փասատինայի Վաչէ Մանուկեան Վարժարանի դռները հայ նոր սերունդին առջեւ:

Մտիկ ըրէք ձեր սրտերուն մէջ շրջագայող արեան ձայնին:

## Ողջ Օրը Աշխոյժ Մնալու Գաղտնիքներ

1) Պահպանեցէք քունի ժամերը: Քունի ոչ-բաւարար քանակը կը խախտէ մարմնի կենսաբանական ռիթմերը, որոնց իբրեւ արդիւնք՝ կրնաք նոյնիսկ մնայուն յոգնածութիւն ձեռք բերել:

Որպէսզի մարմնի կենսաբանական ռիթմերը ճիշդ աշխատին, մասնագէտները խորհուրդ կու տան հանգստեան օրերուն արթննալ նոյն ժամուն, ինչպէս աշխատանքային օրերուն:

Եթէ ձեր աշխատանքը առաւօտեան շատ կանուխ կը սկսի եւստիպուած էք արթննալ, երբ դեռ դուրսը մութ է, միացուցէք տան բոլոր լոյսերը. այդպէս մարմինը աւելի շուտ կ'արթննայ:

2) Սնունդը: Ածխաջրերու փոխարէն նախապատուութիւնը տուէք սպիտակուցներուն: Կանայք, որոնք սնունդի մէջ ածխաջրերու հաշուին կը մեծցնեն սպիտակուցներուն քանակը, առաւել աշխոյժ կ'ըլլան ողջ օրուան ընթացքին:

3) Սուրճը: Շատ գիտնականներ խորհուրդ չեն տար սուրճ խմել անմիջապէս արթննալէ ետք: Ատիկա կը բացատրուի անով, որ քնացած ժամանակ մարմինը կ'արտադրէ ադենոզին նիւթը, որ կը նպաստէ առաւօտեան աշխուժութեան, իսկ քաֆէինը կը կանխէ անոր ազդեցութիւնը: Սուրճ պէտք է խմել կէսօրին, երբ ադենոզինի բնական ազդեցութիւնը սպառած է:

Մէկ կամ կէս բաժակ սուրճը լրիւ հերիք է ցերեկուան ժամերուն ուժի կորուստը վերականգնելու համար:

4) Սնուելու ժամերը: Եթէ ձեր մարմինը նախաճաշին կը սպասէ, ըսենք, առաւօտեան ժամը 7-ին, իսկ ճաշին՝ 12-ին, բայց դուք կը սնուիք քաոսային ռեժիմով, չէք խուսափիր արեան ճնշման տատանումներէն, քնատութենէն: Կանոնակարգեցէք սնունդը: Երեկոյեան նախապատրաստեցէք նախաճաշի համար անհրաժեշտ մթերքը, որ հասցնէք առաւօտեան սնուիլ:

Ճաշ վերցուցէք ձեր հետ, եթէ գրասենեակէն դուրս գալ չէք կրնար, միրգեր ունեցէք պայուսակին մէջ, ընթրիքէն ուշանալու պարագային ճանապարհին ուտելու համար:

5) Կարճ ընդմիջումներ աշխատանքի ընթացքին: Աւելի լաւ է օրուան ընթացքին կազմակերպել կարճ-կարճ ընդմիջումներ, քան սպասելու երեկոյեան երկարատեւ հանգիստ վայելելուն:

Անգամ 3 վայրկեանով աշխատանքէն կտրուիլն ու փոքրիկ ընդմիջում ընելը կ'իջեցնէ սթրեսի հորմոններուն աշխուժութիւնը, լարուածութիւնը մկաններուն մէջ: Առանձնացէք, նստեցէք ձեզի յարմար տեղ մը, փակեցէք աչքերը, դանդաղ շնչեցէք եւ արտաշնչեցէք, յիշեցէք սիրելիներու դէմքերը, լաւ բաներ ձեր կեան քէն:

Չէք հաւատար, բայց այդ երեք վայրկեանները կրնան «փրկութեան ովասիս» դառնալ դժուար օրուան յորձանուտին մէջ:

6) Քնկոտութիւն: Եթէ ցերեկը քնկոտութիւն կը զգաք, դուրս ելէք կարճատեւ զբօսանքի: Եթէ չկայ ատոր հնարաւորութիւնը, բացէք պատուհանը, մաքուր օդ շնչեցէք եւ «զննեցէք» շրջապատը:

7) Երեկոյեան՝ մարմնամարզանք: Եթէ կը թուի, թէ երեկոյեան մարմնամարզանքով զբաղելու ուժ չէ մնացած, միացուցէք առոյգացնող երաժշտութիւն եւ սկսեցէք վարժութիւններ ընել:

Գիտնականներու կատարած ուսումնասիրութիւնները ցոյց տուած են, որ երաժշտութեան ներքոյ մարզուիլը շատ աւելի կ'աշխուժացնէ, քան լռութեան մէջ:

8) Քունէն առաջ: Գիշերը վնասակար է համակարգիչի առջեւ նստիլը՝ միաձայն կը պնդեն գիտնականները: Պաստառին ուժեղ լոյսը ուղեղը կ'ընկալէ առաւօտեան լոյսի նման, որմէ կ'աշխուժանայ, եւ իբրեւ արդիւնք՝ կը քնանանք ու կ'արթննանք անկանոն ռեժիմով:

Քունէն առաջ օգտակար է զբօսնել կամ կարդալ, ի դէպ՝ վերջին պարագային համոզուեցէք, որ ձեր սենեակի լոյսին հզօրութիւնը չի գերազանցեր 60 ուաթը:

## Տարիքի Հետ Իրարու Հանդէպ Հետաքրքրութիւնը Չկորսնցնելու Խորհուրդներ

Տարիքի հետ, բնականաբար, ֆիզիքական ցանկութիւնն ու իրարու հանդէպ գայթակղութիւնը կրնայ կորսուիլ ո՛չ միայն առողջական խնդիրներու բերումով, այլեւ՝ մեր արտաքին տեսքով:

Ի՞նչ ընել.

1) Փորփրեցէք ձեր յիշողութիւնը- Հայեացք նետելով ձեր զուգընկերոջ վրայ՝ յիշեցէք ձեր երջանիկ օրերը որեւէ ռոմանթիկ ուղեւորութեան ընթացքին: Հաւանաբար մարմինը փոփոխութիւն կրած է, բայց ժպիտն ու աչքերը մնացած են նոյնը:

Զգացէք իրարու գրկախառնութիւնները, բոյրը, մազերը:

Նման զգացողութիւնները պիտի օգնեն ձեզի յիշելու այն ժամանակը, երբ դուք երկուքդ ալ աւելի երիտասարդ ու գրաւիչ էիք:

2) Օգտագործեցէք ձեր երեւակայութիւնը- Մի վախնաք դերային խաղերէն: Ձեր ննջարանը կրնայ դառնալ հասուն տարիքի աւազէ հրապարակ: Կը զարդարուիք, թէ ոչ, յօրինեցէք պատմութիւններ ու ձեզի համար արկածներ ստեղծեցէք անկողինին մէջ:

3) Փոփոխութեան ենթարկեցէք ձեր սպասումները- Բաց եղէք սեռային յաջողութեան գնահատականի այլ եղանակի նկատմամբ: Մի սպասէք, որ ամէն ինչ ըլլայ այնպէս, ինչպէս երիտասարդութեան տարիներուն՝ վառ երեւակայութիւն, աշխոյժ սեռային յարաբերութիւն եւ այլն: Դուք կը փոխուիք, կը փոխուի ձեր մարմինը, ու սեռային աշխուժութիւնը՝ նոյնպէս: Եթէ դուք սպասէք նոյն բանին, ինչ ունեցած էք նախապէս, դուք միայն պիտի յուսահատիք:

Պարտադիր չէ սկսիլ գրգռուածութենէ, սկսեցէք պարզապէս գրկախառնութիւններէ: Կարելի է նոյն գրկախառնութիւններով ալ աւարտել, որ աւելի լաւ է, քան ոչինչը:

# ՄԱՐԶԱԿԱՆ

## «Լիւերպուլի» եւ «Մանչեսթեր Սիթի» Կամային Յաղթանակները



*Անգլիայի առաջնութեան 11-րդ տուրում առաջատար «Լիւերպուլը» հիւրընկալուեց «Աստոն Վիլլային» եւ միայն վերջին րոպէներին կարողացաւ կամային յաղթանակի հասնել՝ 2:1 հաշուով:*

*Գերմանացի Յուրգեն Կլոպի գլխաւորած թիմին յաղթանակ բերեցին շոտլանդացի պաշտպան Էնդրիու Ռոբերտսոնի եւ Սադիօ Մանէի կոլերը: Սենեգալցի յարձակուողն աչքի ընկաւ աւելացուած չորրորդ րոպէին:*

*«Լիւերպուլը» 31 միաւորով գլխաւորում է մրցաշարային աղիւսակը:*

*Երկրորդ տեղում ընթացող ախոյեան «Մանչեսթեր Սիթին» հետ է 6 միաւոր: Կատալոնացի Խոսեպ Գուարդիոլայի գլխաւորած թիմը տանը 2:1 հաշուով կամային յաղթանակ տարաւ «Սաութհեմփթոնի» նկատմամբ: Մանչեսթերեան ակումբի կազմում աչքի ընկան արժենթինացի յարձակուող Սերխիօ Ագուերոյի եւ անգլիացի պաշտպան Կայլ Ուոքերի կոլերը:*

*«Արսենալը» սեփական խաղադաշտում չկարողացաւ առաւելութեան հասնել «Վուլվերհեմփթոնի» նկատմամբ՝ 1:1:*

## «Ռոմա»-ն Առանց Մխիթարեանի Յաղթեց «Նապոլի»-ին

*Իտալիայի ֆուտպոլի առաջնութեան 11-րդ տուրում «Ռոմա»-ն սեփական յարկի տակ հիւրընկալել էր «Նապոլի»-ին:*

*«Արմէնպրես»-ի հաղորդմամբ՝ նախ հանդիպման 19-րդ րոպէին Նիկոլ Զանյոլոն բացեց խաղի հաշիւը, այնուհետ երկրորդ կէսի 55-րդ րոպէին Ժորդան Վերետուն կրկնապատկեց առաւելութիւնը: Միայն 72-րդ րոպէին «Նապոլի»-ն խփեց հեղինակութեան գնդակը:*

*Հայաստանի ազգային թիմից Հենրիխ Մխիթարեանը կրկին բացակայում էր յայտացուցակից:*

*Այս յաղթանակից յետոյ «Ռոմա»-ն մրցաշարային աղիւսակում երրորդն է եւ ունի 22 միաւոր:*

## «Ռեալը» Միաւորներ Կորցրեց «Բետիսի» Հետ Խաղում

*Սպանիայի առջնութեան 12-րդ տուրում «Ռեալը» «Սանտյագօ Բեռնաբեուում» ընդունեց «Բետիսին»:*

*Խաղն անցաւ մադրիդցիների առաւելութեամբ, բայց այդպէս էլ կոլ չգրանցուեց:*

*Այսպիսով, «սերուցքայինները» չկարողացան լիարժէք օգտուել «Բարսելոնայի» սայթաքումից, բայց վաստակեցին 22 միաւոր եւ մնացին երկրորդ տեղում՝ միաւորներով հաւասարուելով կատալոնական թիմին: «Բետիսը» 13 միաւորով 14-րդն է:*

## «Բարսելոնան» Արտագնայ Խաղում Պարտուեց «Լեւանտեին»

*Սպանական Լա լիգայի 12-րդ տուրում «Լեւանտեն» հիւրընկալել էր «Բարսելոնային»: Տանտերերը յաղթեցին 3:1 հաշուով:*

*Երկրորդ կէսում՝ 7 րոպէի ընթացքում Կամպանիայի, Մայորալի եւ Ռադոյայի կոլերը յաղթանակ են պարգեւել «Լեւանտեին»:*

*Այս պարտութիւնից յետոյ «Բարսելոնան» մնում է 22 միաւորով, «Լեւանտեն» 17 միաւորով 8-րդ տեղ է բարձրանում:*

## Կլոպ. ՖԻՖԱ-Ն եւ ՈւԵՖԱ-Ն Մտածում ԵՆ Միայն Իրենց Գրպանի Մասին

*Ախոյեանների լիգայի գաւաթակիր, Անգլիայի փոխ ախոյեան «Լիվերպուլի» գլխաւոր մարզիչ Յուրգեն Կլոպը խօսել է անգլիական թիմերի ծանր խաղացանկի մասին:*

*«Մարդիկ կը զարմանան, թէ ինչու եմ ես այս ամէնն ասում, քանի որ իմ թիմը Ախոյեանների լիգայի ախոյեանն ու Անգլիայի փոխախոյեանն է:*

## ԱԱ Մ23. Արմէն Մելիքեանը՝ Ախոյեան



*Հունգարիայում աւարտուող հունահռոմէական ըմբշամարտի աշխարհի մինչեւ 23 տարեկանների առաջնութիւնում Հայաստանի ներկայացուցիչ Արմէն Մելիքեանը 60 կգ քաշայինների պայքարում նուաճեց ոսկէ մեդալ:*

*Եզրափակիչում հայ ըմբիշը մրցեց Ղրղզստանի ներկայացուցիչ Ժոլման Շարշենբեկովի հետ եւ յաղթեց 9:7 հաշուով:*

*Եզրափակիչ գօտեմարտն անցաւ լարուած պայքարում: Ղրղզստանի ներկայացուցիչի կոպիտ գօտեմարտելու հետեւանքով Արմէն Մելիքեանը առաջին մրցափուլում վնասուածք ստացաւ քթի հատուածում, ինչի հետեւանքով ամբողջ գօտեմարտի ընթացքում արնահոսում էր:*

*Առաջին մրցափուլում 5:5 հաշուից յետոյ Մելիքեանը զարգացրեց մարտավարութիւնը երկրորդում եւ 4 միաւորով առաջ անցաւ հաշուի մէջ: Պայքարն աւարտուեց 9:7 հաշուով՝ հայ ըմբիշի վստահ յաղթանակով:*

## ՖԻԴԵ. Լեւոն Արոնեանը 8-րդն է



*Շախմատի միջազգային ֆեդերացիան (ՖԻԴԵ) հրապարակել է շախմատիստների դասակարգման ամենամսեայ աղիւսակը: Հայաստանի հաւաքականի առաջատար Լեւոն Արոնեանը 8-րդ տեղում է:*

*Նրանից բարձր վարկանիշ ունեն աշխարհի ախոյեան, նորուեգացի Մագնուս Կարլսենը, ամերիկացի Ֆաբիանօ Կարուանան, չինացի Դին Լիրենը, ֆրանսացի Մաքսիմ Վաշիէ-Լագրաւը, ատրպէյճանցի Շաքրիյար Մամեդեարովը, հոլանդացի Անիշ Գիրին եւ ռուսաստանցի Եան Նեպոմնյաշչին:*

*Հայաստանի ներկայացուցիչներից 100 ուժեղագոյնների թւում են նաեւ Գաբրիէլ Սարգսեանը (47) եւ Հրանտ Մելքումեանը (79):*

## Նիկօ Կովաչը Հեռացուել է «Բաւարիա»-ի Գլխաւոր Մարզչի Պաշտօնից



*Միւնխենի «Բաւարիա»-ի գլխաւոր մարզիչ Նիկօ Կովաչը հեռացուել է զբաղեցրած պաշտօնից:*

*«Արմէնպրես»-ի հաղորդմամբ՝ այս մասին գրում է գերմանական ակումբի պաշտօնական կայքը: «Բաւարիա»-ն փոխադարձ համաձայնութեամբ խզել է պայմանագիրը խորուած մասնագէտի հետ: Կովաչի հեռացումը կապւում է ակումբի ոչ բաւարար արդիւնքներով:*

*Կովաչը «Բաւարիա»-ի գլխաւոր մարզչի պաշտօնը զբաղեցրեց 2018 թուականին: Վերջինիս գլխաւորութեամբ միւնխենեան ակումբը նախորդ մրցաշրջանում դարձաւ երկրի ախոյեան, գաւաթակիր եւ սուպերգաւաթակիր:*

---

*Անգլիայում կազմակերպւում է Անգլիայի գաւաթի խաղարկութիւն եւ անգլիական Լիգայի գաւաթի խաղարկութիւն, դրան գումարած ՈւԵՖԱ-ի կողմից անկացուող մրցաշարերը: Որեւէ մէկին չի հետաքրքրում, թէ ակումբն ինչ խաղացանկ ունի եւ քանի օր ընդմիջումներով պէտք է մասնակցի հանդիպումներին:*

*ՖԻՖԱ-ն, ՈւԵՖԱ-ն, Պրեմիեր լիգայի ղեկավարութիւնը մտածում են միայն իրենց գրպանի մասին: Ես կը ցանկանայի, որ այդ կազմակերպութիւնները մտածեն նաեւ ֆուտպոլիստների մասին»,- The Guardian-ի հաղորդմամբ՝ ասել է Կլոպը:*

## Մեծարանքի Երեկոյ

Շարունակուած էջ 8-էն

*Տոքթ. Աւետիքեան ու ընթերցեց մեծարեալին կենսագրականը, թուելով անոր ուսուցչական ասպարէզի մէջ տարած գործունէութիւններն ու ստացած բազում շքանշաններն ու գնահատագրերը:*

*Հանդիսավարը յատուկ շնորհակալութիւն յայտնեց Պր. Կարպիս Սարաֆեանին սոյն ձեռնարկին պատրաստութեանց համար: Ապա ընթերցեց Տատեան Վարժարանի քայլերգը, որուն բառերը գրուած են մեծարեալին կողմէ:*

*Հրաւիրուեցաւ մեծարեալը որպէսզի իր սրտի խօսքը փոխանցէ:*

*Օր. Պ. Յակոբեան ողջունեց բոլորը ջերմ սիրով եւ անսահման կարօտով, իր հետ բերելով իրենց ծննդավայր՝ պոլսոյ քաղաքի բոյրն ու համբոյրը, երազներն ու ապրումները, մանկութեան ու երիտասարդութեան անմոռանալի ու անվերադարձ օրերը: Ան յայտնեց թէ երբեք չէ մոռցած իր աշակերտները որոնք այդ օր ներկայ են այդտեղ որովհետեւ անոնք իրեն կը յիշեցնեն ամենէն մաքուր եւ ամենաանկեղծ ապրումները: Բացատրութիւն տուաւ վարժարանին 175ամեակի առթիւ Պոլսոյ մէջ կատարուած հանդիսութիւններուն մասին:*

*Օր. Պ. Յակոբեան շեշտեց թէ Տատեան վարժարանը ոչ միայն ուսում ու կրթութիւն ջամբած է, այլ՝ ընտանիքի սէր, անկեղծ հոգատարութիւն եւ այս բոլորին առընթեր մասնաւորաբար տոհմիկ կրթութիւն, որ մեր լինելութեան ու գոյատեւման նախապայմանն է: Տատեանի մէջ կայ սիրոյ կապ, ըսաւ ան, համերաշխութիւն եւ վստահութիւն, ուր ուսուցիչը կը գործէ զոհաբերութեամբ ու նուիրումով: Ան կրթական հաստատութիւն մըն է ուր իր իւրայատուկ հմայքն ու քաշողականութիւնը ունի: Իր վերջին խօսքով Օր. Պ.Յակոբեան յորդորեց բոլոր հին ու նոր Տատեանցիները որպէսզի ձեռք ձեռքի տան ու տէր կանգնին այս վարժարանին որպէսզի ան մեր քոյր վարժարաններուն հետ ըլլայ թեւանցուկ, շղթայ կազմած ու մեր պայքարին ու մարտնչումներուն ցայտուն խորհրդանիշը դառնայ:*

*Ապա հրաւիրուեցան Միութեան Գործադիր Յանձնախումբի ատենապետ՝ Տոքթ. Մուրատ Քէօշքէրն ու Յակոբ Տերունեանը եւ Տոքթ. Աւետիքեանի ձեռամբ մեծարեալին շնորհուեցաւ գնահատագիր մը Մշակութային Յանձնախումբին կողմէ առ ի գնահատանք իր բազմամեայ նուիրեալ գործունէութեանց:*

*Առնուեցաւ նաեւ յիշատակի խմբային պատկեր:*

*Օր. Պ. Յակոբեան շնորհակալութիւն յայտնեց Պոլսահայ մեծ ընտանիքին, որ իրողապէս կ'իրականացնէ իր ազգային պարտականութիւնը:*

*Պոլսահայ Միութեան եւ բոլոր յարակից յանձնախումբերու անունով կը շնորհաւորենք Օրդ. Մաքրուհի Պ. Յակոբեանը որ ծառայեց իբրեւ ուսուցչուհի եւ իր տքնաջան ու հետեւողական աշխատանքով կրցաւ իրականացնել իրեն վստահուած առաքելութիւնը: Ան՝ Տատեան վարժարանի առաքելութեան հաւատացող, լուռ, անշեղ եւ դաստիարակիչ նկարագրով, բարձր մակարդակով եւ հոգիով կատարեց ուսուցչութիւնը վարժարանին մէջ:*

*Ներկաները մեկնեցան, հաւատալով որ հայկական կրթօճախները կը հանդիսանան մայրենիի ջահը վառ պահող բնօրրանները, ապա այդ ջահը սերունդէ- սերունդ կը փոխանցէ հայ ուսուցիչը, եւ այդ կրթօճախին սիւնն է, առանց որուն հայ կրթօճախը կը զրկուի իր հայկական ինքնութենէն: Ի մասնաւորի հայոց լեզուի եւ հայոց պատմութեան առարկաներու դասատուով է, որ կ'արժեւորուի հայ դպրոցը եւ կը դրոշմուի ազգային ինքնութեամբ:*

*«Պոլսահայ Միութիւնը այսօր կու գայ իր երախտագիտութիւնը յայտնելու պոլսահայ ուսուցչուհիին եւ անոր ըսելու՝ «Վարձքդ կատա՛ր»:*

## Շտապեցէ՛Ք. Մի՛ Ուշանաք. Շտապեցէ՛Ք

Շարունակուած էջ 15-էն

*հակառակ անկախ Հայաստանի ու պետականութեան գոյութեան: Իսկ եթէ «Green Card»-ին հետամուտ բոլոր քաղաքացիները յաջողին հասնիլ իրենց երազին, ապա դժուար չէ պատկերացնել այն աղէտը, որուն ահազանգերը կը լսենք ամէն օր:*

*Արեւելահայ զարմիկներ, իրօք բախտաւոր էք: «Green Card»-ը ձեզ կը սպասէ: Փորձեցէ՛ք ձեր բախտը: Շտապեցէ՛ք, մի՛ ուշանաք: Շտապեցէ՛ք: Շտապեցէ՛ք...:*


**SAVE THE DATE**

**AACCWD Sacred Music Convention & Assembly**
**Workshops, classes, and more!**
**Please visit www.aaccwd.com for tickets & full details!**
**Date: November 8 - 10, 2019**
**Location: Saint Peter Armenian Apostolic Church**
**17231 Sherman Way Van Nuys, CA 91406**

**ԳՐԱՒԱԾ ԹՈՒԱԿԱՆ**

8, 9 եւ 10 ՆՈՅԵՄԲԵՐ 2019 Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի:
Sacred Music Convention and Assembly, եկեղեցական երաժշտութեան համագումար, աշխատանիստեր, դասընթացքներ եւ աւելին:
Կազմ.՝ the Association of Armenian Church Choirs of the Western Diocese-ի (AACCWD):
Վայր՝ Ս. Պետրոս Հայց. Առաք. եկեղեցի, 17231 Sherman Way, Van Nuys, CA 91406:
Յաւելեալ տեղեկութիւններու եւ տոմսերու համար՝ այցելեցէք www.aaccwd.com կայքը:


## Ջախաւեր Մտայնութիւն

Շարունակուած էջ 13-էն

*ՅԻՍ ՍԵՐՈՒՆԴԻՆ ՀԱՅԵՑԻ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ ՊԷՏՔ ՉԷ..., ոչ աւել, ոչ պակաս,- եւ ի՞նչ կ'ուզենք մենք այս մարդէ, երբ նման համոզում ունի: Ուրեմն պէտք չէ զարմանալ թէ ինչու Փասատինայի վարժարանը գալ տարուընէ թեւերը սոթթած Քանոկա Փարք պիտի չուի: Վա՜յ մեզ, վա՜յ, որ տէրդ մանուկ է եղեր...*

*Ձեր AGBU պարբերականին մէջ միշտ ապէս կը տրուին Բարեգործարանի նուիրատուներուն անունները, աշխարհամասի տարբեր երկրներէ ընիկ սփիւռքահայ մեր տատիկներու, պապիկնեու՝ կտակով փոխանցուած ինչքը եւ գումարին չափը:*

*Հայաստանի անկախացումէն ետք ՀԲԸ Միութիւնը երես թեքած է Սփիւռքէն, Սփիւռքի կառոյցներէն, իբրեւ թէ ուշադրութիւնը սեւեռելով Հայաստանի վրայ, հասկցանք, շատ լաւ. O.K.,- ինչպէս կ'ըսէ ամերիկացին, հապա մե՞նք՝ սփիւռքահայերս:*

*Ի՞նչ ըսել է դպրոց-վարժարան գոցել: Ի՞նչ է դրամ չունի՞նք Պրն. Սեդրակեան: Որո՞ւ համար, ի՞նչ գէշ օրերու համար տարիներ շարունակ կ'ուռճացնէք Հայ Ժողովուրդին պատկանող ՀԲԸ Միութեան գանձանակը, «նիւթական վնաս կը բերէ» ըսելով Փասատինայի վարժարանը:*

*Ի՞նչ է, դպրոցէ՞ն ալ շահ կ'ակընկալէիք: Դպրոցը Նէսոյին «խանութը» չէ, որ շահ բերէ: Աշխարհի վրայ ոեւէ դպրոց շահ չի բերեր, ինձմէ շատ աւելի լաւ գիտէք այդ պարագան: Դպրոց պահելու համար դրամ կ'ուզէ եւ շատ դրամ: Ինչ է, 90 տարի շարունակ Մելգոնեանը ինքնաբա՞ւ էր, կամ՝ եկամտաբե՞ր: Ո՛չ, մարդիկ երազ ունէին, հաւատ, որ օրերէն մէկը անկախ երկիր կը դառնայ Հայաստանը եւ պէտք պիտի ունենայ նորաթուխ երկրի մը համար տարբեր ճիւղերու մասնագէտներ՝ արուեստական, արհեստական, գիտութեան, մշակոյթի մարզերէն ներս:*

*Ալ չեմ խօսիր այն մասին, որ ՀԲԸ Միութիւնը պարտաւոր է ոչ թէ գոցել, այլ նորանոր դպրոցներ բանալ պարզ աշխատաւորի զաւկին համար մատչելի տարէվճարով, չունեւորներուն համար ալ՝ անվճար ուսուցումով՝ Սփիւռքի ամբողջ տարածքին եղող մեծաթիւ հայ համայնքներուն մէջ, ինչխսին Լոս Անջելէս գաւառն է: Ամօթ է դրամի մասին խօսիլը: Մենք գոյատեւման, նոր եւ գալիք սերունդները հայ պահելու, հայեցի դաստիարակութեամբ զինելու սրբազան պարտականութիւն ունինք: Ձեր եւ մեր պարտականութիւնն է զօրացնել Սփիւռքը՝ ի շահ Հայաստանի: Այսօրուայ հրամայականն է՝ Զօրաւոր Սփիւռք՝ Զօրաւոր Հայաստան: Այսպէս՝ դպրոց քանդելով, այդ կապին հիմն է, որ կը թուլցնէք Ձեր ձախաւեր գործողութիւններով: Մի նեղուիք, ես ճշմարտութիւնն է, որ կ'ըսեմ՝ մամուլի ազատութեան ջատագով այս երկրին մէջ:*

*Այս առնչութեամբ, 2-3 տարի առաջ ահա թէ ինչ գրած է Փանոս Թիթիզեանը. «Հիմա ժամանակն է, որ ՀԲԸ Միութեան առանցքային ուշադրութեան առարկայ դառնայ Հայ Սփիւռքը: Եթէ այս բոլոր մարտահրաւէրներուն դիմաց Բարեգործականը չկանգնի, հապա ո՞վ պիտի կանգնի: Եթէ ոչ հիմա, ե՞րբ: Մասնայատուկ գուրգուրանքի առարկայ դարձնելով նոր սերունդը»:*

*Մարգարէական խօսքեր: Ետ կեցէք Ձեր որոշումէն, Պրն. Պերճ Սեդրակեան, թէեւ, կ'ըսուի թէ Ձեր որոշումը վերջնական է: Երբեք ուշ չէ վազ անցնիլ, ներեցէք՝ այս ազգադաւ որոշումէն ձերբազատուելու համար: Իր բազմաթիւ հրաշագործումներու վարժ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը այլեւս իրաւունք չունի նման սխալներ գործելու: Դեռ եղածները չենք մարսած:*

*Պէտք է մնայ եւ հարատեւ գործունէութեամբ շարունակէ Փասատինայի Վաչէ եւ Թամար Մանուկեան երկրորդական վարժարանը:*

*Միայն ազգին, ժողովու՛դին ձայնը մտիկ ընելէ ետք է, որ կրնաք յուսալ, թէ Ձեր անունը ապագային կը գրուի Պօղոս Նուպարի եւ Ալէք Մանուկեանին հետ միասին:*

*Արժանացէք այդ պատուին:*

## Նոր Հրատարակութիւն. Յորդանանի Հայերը

Շարունակուած էջ 16-էն

*Նրանք աշխուժօրէն ներգրաւուած են երկրի տնտեսական եւ հասարակական կեանքում՝ մեծ փորձառութիւն ունենալով մի շարք արհեստների ու արուեստների ոլորտներում: Պետութեանկողմից ճանաչուած են որպէս կրօնական փոքրամասնութիւն: Պետութեան մօտ համայնքը, իսկ համայնքի առաջ պետութեանը ներկայացնում է Երուսաղէմի հայոց պատրիարքութեանը պատկանող Հայ Առաքելական Եկեղեցու Ամմանի հայոց եւ շրջակայից թեմը՝ ի դէմս պատրիարքական փոխանորդի: Ներկայումս հայերի ճնշող մեծամասնութիւնն ապրում է Ամմանում: Հայկական կառոյցները գտնւում են Ամմանի Ճապալ Աշրաֆիէ թաղամասում: Հայ համայնքը որոշակի գործօն է նաեւ ՅորդանանՀայաստան երկկողմ յարաբերութիւնների եւ համագործակցութեան հարցում:*

*Հարկ է նկատի ունենալ, որ Յորդանանի հայ համայնքի առաջ ներկայումս ծառացած են հայապահպանութեանն առնչուող բազմաթիւ հրատապ խնդիրներ, որոնց չկարգաւորման դէպքում որոշ ժամանակ անց համայնքը կարող է որոշակիօրէն ուծանալ: Համայնքը Հայաստանի աջակցութեան կարիքն ունի:*





ARMENIAN
AMERICAN
MUSEUM
Gala
2ND ANNUAL
SUNDAY, DECEMBER 8, 2019
4:30PM Reception | 6:00PM Dinner & Program
The Beverly Hilton | Beverly Hills, California
DISTINGUISHED HONOREES OF THE 2ND ANNUAL GALA
Paul R. Ignatius
Former U.S. Secretary of Navy &
U.S. Assistant Secretary of Defense
Kathryn Barger
Los Angeles County Supervisor
5th District
Kenneth L. Khachigian
Brownstein Hyatt Farber Schreck
Senior Partner
Join us at the 2nd Annual
Armenian American Museum Gala on
Sunday, December 8, 2019!
The signature event of the year
will celebrate and support the
landmark project as it approaches its
historic groundbreaking year.
ARMENIAN AMERICAN MUSEUM
RESERVE BY NOVEMBER 8, 2019 | WWW.AAMGALA.ORG | (818) 644-2073
BUILDING TOGETHER. LEAVING A LEGACY.
ACF
AGBU
WESTERN DISTRICT
Նոր Օր